Ազգ
Azg
armenian daily

21 ՄԱՐՏ 1995 ԵՐԵՔՇԱԲԹԻ # 51 (805)

# 35 հազարանոց թուրքական զորք Հյուսիսային Իրաքի դեմ

ԱՆԿԱՐԱ, 20 ՄԱՐՏ, BBC, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Թուրքական բանակի 35000 հոգանոց մոտոհրետանային, հրասայլային եւ հրետանային ստորաբաժանումները, ռազմական ինքնաթիռների պաշտպանության տակ, այս առավոտ ներխուժեցին Հյուսիսային Իրաք, 200 կմ երկարությամբ ճակատային գծով: Նրանց նպատակն է, ինչպես հաղորդել է Թուրքիայի ԱԳՆ ներկայացուցիչ Ֆերհաթ Ատամանը, 40 կմ խորանալ իրաքյան տարածքներ եւ հիմնականում ոչնչացնել Քրդական աշխատավորական կուսակցության (PKK) ռազմական հենակետերը, իբր թույլ չտալու, որ այդ կուսակցությունն օգտվելով անիշխանական վիճակից տեղական ընտրություններ անցկացնի իրաքքրդական շրջաններում: Այնինչ, քաղաքական մեկնաբանների կարծիքով, նկատի ունենալով հարձակվող զորքի աննախադեպ թվակազմը, թուրքական կառավարությունը ձգտում է խորհրդարանական առաջիկա ընտրություններից առաջ ընկճել քրդական դիմադրությունը եւ, միաժամանակ, պատասխան տալ Գերմանիայում այս օրերին PKK-ի կողմից իրականացվող հակաթուրքական գործողություններին: Նախնական տվյալներով, առաջացող թուրքական բանակը մեծ ավերածություններ է գործել հատկապես Զախոյի շրջանում, որտեղ, ինչպես հայտնի է, ապրում են նաեւ մեծ թվով քրդացած հայեր: ■

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

## ՀՌԱԿ ատենապետը դեմ է պետական միջամտությանը

Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը կարծում է, որ կաթողիկոսական ընտրությունների հարցում պետական միջամտությունն անընդունելի է: «Ինչ վերաբերում է անձնական դիրքորոշմանը, ապա ես պատեհ առիթը կունենամ իմ կարծիքը արտահայտելու քվեարկության միջոցով, որը գաղտնի է», ասաց ատենապետը «Նոյյան տապան» գործակալության թղթակցի հետ զրույցում: Շատ է խոսվում այն մասին, որ կաթողիկոսական ընտրությունների արդյունքները կարող են նպաստել Հայ առաքելական եկեղեցու երկփեղկվածության լուծմանը: Ռուբեն Միրզախանյանի կարծիքով, նման տեսակետը չի համապատասխանում ո՛չ պատմական ճշմարտությանը, ո՛չ էլ խնդրի լուծմանը: Նա ընդգծել է, որ երկփեղկվածությունը չի կարելի հաղթահարել Հայ առաքելական եկեղեցու գլուխ կանգնեցնելով հենց երկփեղկվածության հիմնական հեղինակներից մեկին: ԵՏ

## «Շատ մտահոգ եմ եկեղեցիի ապագայով»

Անցնող մի քանի օրերին խմբագրությունս սփյուռքից ստացել է մի քանի հեռախոսազանգ եւ նամակներ՝ կաթողիկոսական առաջիկա ընտրությունների առթիվ: Դրանցից ոմանք՝ Ազգային եկեղեցական ընդհ. ժողովի համար տեղերում ընտրված պատգամավորներից, որոնցից մեկի հայտարարությունը, իր խնդրանքով գրի առնված մեր կողմից, ստորեւ տպագրում ենք նույնությամբ, առաջիկայում նաեւ մյուսներին անդրադառնալու խոստումով:

**Ջերրի Թերզյան, Դետրոյթ, Ս. Հովհաննես եկեղեցու ծխական խորհրդի փոխատենապետ, Արեւելյան թեմի թեմական խորհրդի անդամ, պատգամավոր Ազգային եկեղեցական ժողովի:** «Ես կուսակցական չեմ եւ չունիմ կուսակցական որեւէ նկատառում: Ես Հայ առաքելական եկեղեցին կընդունիմ իբրեւ հաստատություն մը, որ զիս, զավակներս եւ ինծի նման շատերը հայ կպահե: Շատ, շատ մտահոգ եմ մեր եկեղեցիի ապագայով: Քանի որ, առաջին՝ այն ինչ որ կոմունիստները չըրին այսպես բացահայտ, այն ինչ որ թուրքերը Կոստանդնուպոլսո պատրիարքական վերջին ընտրություններում չըրին (մենք համաձայն չենք այս պնդմանը. խմբ.), ահա մեր մայր հայրենիքի գերագույն պետը կընե՝ այսպես միջամտելով: Երկրորդ՝ ամբողջ 40 տարի Անթիլիասի եկեղեցականները քար նետեցին Ս. Էջմիածնի եւ Էջմիածնականներուն վրա, իսկ վերջինները կոմունիստներու կրունկին տակ անգամ դիմացան եւ պահպանեցին Ս. Էջմիածինը: Եւ հիմա՝ 40 տարի քար նետողները պիտի գան ու բազմին դիմացողներուն եւ Աթոռը պահողներուն տեղը: Ասիկա անընդունելի է»:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

# Եթե ԱԱՊՎ-ն չասի ինչով է զբաղված, չի ֆինանսավորվի

[illegible]

Գերագույն խորհրդի երեկվա արտահերթ նիստում մշտական հանձնաժողովների նախագահների զեկուցումները, կապված 1995 թ. սոցիալ-տնտեսական ծրագրի, բյուջեի եւ դրամավարկային քաղաքականության հետ, ինչ-որ տեղ ձեւական բնույթ էին կրում: Բոլոր փաստերն ու գնահատականները քանիցս հնչել էին հանձնաժողովներում կազմակերպված միացյալ քննարկումներում, սակայն գրեթե նույնությամբ այդ ամենը կառավարությունը կրկին ներկայացրեց ԳԽ-ին եւ գրեթե նույն հաջորդականությամբ հանձնաժողովները տվեցին դրական կամ բացասական գնահատական: Վերջնական լուծումը կտրվի այսօր, երբ անցկացվեն քվեարկությունները: Մինչ այդ նշենք, որ երեկվա նիստում եղան հարցապատասխաններ, հայտարարություններ, որոնք արդեն իսկ քննարկված են ներկայացված փաստաթղթերը: Ավետ Գրիգորյանը նշեց, որ թեեւ ծրագիրը սոցիալական քաղաքականության իմաստով տարբերվում է նախորդ տարվանից, բայց սոցիալական իրավիճակի կտրուկ փոփոխություն չի կարելի ակնկալել:

Ռաֆայել Ղազարյանն անդրադարձավ կրթական ու գիտական համակարգին, բայց այդպես էլ չկարողացավ պատասխանել այն հարցին, թե բյուջեով որքան առավելագույն աշխատավարձ է նախատեսված ուսուցչի համար: Ռուբեն Թորոսյանը հայտարարեց, թե իրենց հանձնաժողովը համաձայնություն չի տվել ներկայացված նախագծերին, եւ մինչեւ օրս չեն ստացել կառավարությանն ուղղված իրենց դիտողությունների պատասխանները: Ավելին, նա նշեց, թե խրախուսվում է անօրինական սեփականաշնորհում, սերտիֆիկատների արժեքը առանց հիմնավորման բարձրացվել է եւ նույնիսկ չի երկարացվել դրանց ժամկետը, քանի որ նախապես դրանք պետք է գործեին մինչեւ 1994 թ. դեկտեմբերը: Իր բաժին նախատինքը ստացավ նաեւ հեռուստատեսությունը, որը միակողմանիորեն է լուսաբանում սեփականաշնորհման ընթացքը: Ավելի առաջ գնաց Գեւորգ Բաղդասարյանը, նշելով, որ եթե ԱԱՊՎ-ն այսուհետ էլ պաշտպանության եւ ներքին գործերի հարցերի հանձնաժողովին չներկայացնի իր գործունեության մասին բավարար լուսավորություն (ինչպես դա եղել է նախկինում), ապա իմաստ չունի այդ կառույցին ֆինանսավորելը: «Այլապես, պարզ չի դառնում, թե ինչով է զբաղված ԱԱՊՎ-ն», ասաց Գեւորգ Բաղդասարյանը: Նա խոսեց նաեւ պաշտպանության նախարարությունում տիրող թերությունների, զորակոչի անօրինական ձեւերի, խնամքի եւ ծառայությունից ազատված զորակոչիկների դեպքերի, այդ համակարգի հսկայական պարտքերի մասին: «Եթե նրանց անհրաժեշտ դրամ չեն տալիս, պարզ է, որ այսօր էլ պարտք կունենան, վաղն էլ», ասաց նա: Ներքին գործերի համակարգում, պարզվում է, թաքցնում են հանցագործությունների իրական թիվը, թեեւ Գեւորգ Բաղդասարյանի կարծիքով ՆԳ-ն միակ համակարգն է հանրապետությունում, որն այսօր ի վիճակի է լուծել ցանկացած հարց:

Երեկ, նիստի սկզբում տեղի ունեցան նաեւ մի շարք քվեարկություններ, կապված ընտրությունների մասին առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծում փոփոխություններ կատարելու հետ: Առանձին պատգամավորներ որեւէ լուրջ արդյունքի չհանգեցին, բայց երկրորդ ընթերցմամբ ընդունելու ժամանակ հնարավոր են տեղաշարժեր եւ նույնիսկ նոր խմբակցությունների ծնունդ եւ հների փլուզում: ■

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅՐԵՆԻՔ

## «Պայքարը» մայր հայրենիքում

Պատմական ճակատագրի բերումով, հայ ժողովրդի զգալի հատվածի աշխարհով մեկ սփռված լինելու եւ հայ ազգային կուսակցությունների գործունեությունը հարկադրաբար օտարության մեջ ծավալվելու հետ կապված, աշխարհի զանազան երկրներում, դժվարին պայմաններում հրատարակվել են բազմաթիվ թերթեր, պարբերականներ, ամսագրեր: Ու երբ հետադարձ մի հայացք ձգելու լինենք «հայկական սփյուռք» կոչվող ընդգրկուն երեւույթի վրա, ապա խիստ պարզ կդառնա, որ առաջին հերթին հայերեն մամուլի շնորհիվ է, որ ժամանակն ու հանգամանքներն ի զորու չեն եղել օտար ափերում ձուլելու, փոշիացնելու, կլանելու հայության հոծ կամ ամփոփ խմբերը: Ավելին, դրա շնորհիվ է, որ ժողովուրդը մնացել է ժողովուրդ, պահպանել է ոչ միայն իր լեզուն, կրոնը, մշակույթը, այլեւ այն ամենը, ինչը ազգային է ու ազգին ազգ է պահում:

Ու դրանց մեջ իր արժանի եւ ուրույն տեղն ունի «Պայքարը» (1922-ից)՝ նախ որպես Ռամկավար ազատական կուսակցության օրաթերթ, ապա շաբաթաթերթ եւ, ի վերջո, ամսագիր:

Երկար տարիներ Բոստոնում լույս տեսնելու հանգամանքը, այդուհանդերձ, չի խանգարել, որպեսզի կուսակցության գաղափարներն ու հիմնահարցերը քարոզելուց զատ, այն խորապես կապված լինի մայր հայրենիքին, ապրի նրա առօրյայով ու հոգսերով, ուրախանա նրա հաջողություններով ու նվաճումներով: Այն պարբերաբար անդրադարձել է թե սփյուռքի եւ թե մայր հայրենիքի հայության կյանքին ու խնդիրներին, տնտեսությանը, մշակույթին, հասարակական-քաղաքական իրադարձություններին, նպաստել հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանն ու զարգացմանը: «Պայքարի» էջերում հաճախ են տեղ գտել հայրենական մամուլում տպագրված արժեքավոր հրապարակումներ ու հոդվածներ, գիտական, գրական, մշակութային, հասարակական արժեք ներկայացնող ստեղծագործություններ:



Հայկական անկախ պետականության վերականգնումն այժմ հնարավորություն է ընձեռել «Պայքարի» համար, որպեսզի նա այսուհետ բնակություն հաստատի «համայն հայության մայր քաղաքում» Երեւանում:

Տես # էջ 2

ՏԵՌՈՐ

## Գազային զանգվածային ոճիր Տոկիոյի մետրոյում

ՏՈԿԻՈ, 20 ՄԱՐՏ, BBC, WSJ: Այսօր առավոտյան պիկ ժամին գազային ոճիր կատարվեց Տոկիոյի մետրոպոլիտենի 16 կայարաններում: Ներվային անհանգստություն, արտասուք, կուրություն, անգամ մահ պատճառող գազի արձակումից սպանվեց 6 եւ հիվանդանոց տեղափոխվեց ավելի քան 1000 մարդ, որոնցից ոմանք ծանր վիճակում: Անասելի խուճապ եւ իրարանցում կատարվեց: Շատերը ուշակորույս վիճակում իրավապահների եւ իսկույն գործի անցած բանակայինների կողմից տարվեցին կայարաններից դուրս, բաց օդ, մինչեւ շտապօգնության մեքենաների հասնելը: Ոստիկանությունը բացել է լայնածիր հետաքննություն, առայժմ ձեռնպահ մնալով որեւէ հայտարարությունից: Ոճրային նպատակներով օգտագործված գազը եղել է մեթիլ ցիանիդ, որը հիտլերական Գերմանիան օգտագործում էր 2-րդ աշխարհամարտի ընթացքում: 80-ական թթ. վերջերին իրաքյան բանակն էր օգտագործել այն Հալաբջայում, քրդերի դեմ: Այսուհանդերձ, քաղաքական դիտորդների կարծիքով, զանգվածային ոճրագործության մասնակիցները թվով շատ են, քանի որ թունավոր գազը միաժամանակ է դրվել տարբեր կայարաններում: Կասկածներն ուղղված են դեպի աջ կամ ձախ ծայրահեղականները: ■

■ *Իտալիայի նախագահը Թուրքիայում: Մարտի 20-ին սկսվել է Իտալիայի նախագահ Օսկար Լուիջի Սկալֆարոյի եռօրյա պաշտոնական այցը Թուրքիա: Անկարայում նշանակված են Իտալիայի ղեկավարի բանակցությունները եւ զրույցներ Թուրքիայի նախագահ Դեմիրելի, վարչապետ Չիլլերի, Ազգային մեծ ժողովի նախագահ Ջինդորուկի հետ:* ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԸՐՋԱՆ

## Բանակցություններ. Կառուցողական փոխըմբռնման չհասան

ԵԱՀԿ Մինսկի խմբի խորհրդատուների մարտի 20-ից Ստոկհոլմում կայանալիք բանակցությունների հերթական փուլի հեռանկարը ամենայն հավանականությամբ բացասվում է նրանով, որ այսօրվա դրությամբ միջնորդ կողմերին այդպես էլ չհաջողվեց կառուցողական փոխըմբռնման մոտեցումներ մշակել, որոնք թույլ կտային բանակցային գործընթացը դուրս բերել փակուղային իրավիճակից: Այդ մասին մարտի 20-ին Ստեփանակերտում հայտարարեց ԼՂՀ նախագահի մամուլի քարտուղար Ալեքսանդր Գրիգորյանը: Նրա խոսքերով, Մոսկվայում նախորդ հանդիպման ժամանակ հիմնական պահանջը հանդիսացավ ադրբեջանական կողմի փորձը վերանայել բանակցություններում ԼՂՀ պատվիրակության կարգավիճակի վերաբերյալ ԵԱՀԿ բուդապեշտյան գագաթաժողովի որոշումը: Նա տեղեկացրեց, որ հիշյալ հարցում պարզություն մտցնելու նպատակով տարածաշրջան կժամանի ԵԱՀԿ Մինսկի վեհաժողովի պատվիրակությունը ընդլայնված կազմով: Պատվիրակությունը կղեկավարեն Մինսկի խմբի համանախագահների ներկայացուցիչներ Անդերս Բյորները եւ Վլադիմիր Կազիմիրովը: -Լ.Ա.

## Բաքվի իրադարձությունները հրահրել են հայե՞րը

Բաքվում տեղի ունեցած արյունալի բախումների ընթացքում զոհվել են հարյուրից ավելի ոստիկաններ եւ զինծառայողներ, քիչ չի նաեւ խաղաղ բնակչության շրջանում զոհերի թիվը: Խռովության ձախողումից հետո Բաքվում ձերբակալվել են 300-ից ավելի ապստամբներ: Այդ մասին տեղեկացրեց Ադրբեջանի գլխավոր դատախազը հանրապետության անվտանգության խորհրդի նիստում, որը հեռարձակվել է ազգային հեռուստատեսությամբ, մարտի 19-ին: Աղստաֆա եւ Ղազախ շրջկենտրոնների մի շարք վարչակարգային շենքերի գրավման ժամանակ զոհվել են եւս մի քանի տասնյակ ոստիկաններ: Ըստ նույն աղբյուրի, Ադրբեջանի կառավարական զորքերի դեմ կռվում էին 1000-ից ավելի խռովարարներ, որոնց տրամադրության տակ էին զրահատեխնիկա եւ մեծ քանակությամբ ավտոմեքենաներ, այդ թվում «Մերսեդեսներ» եւ «Ջիպեր»: Դատախազը նաեւ տեղեկացրեց ներկաներին, որ ապստամբների ղեկավար Ռովշան Ջավադովի եղբայր Մահիր Ջավադովին մի խումբ համախոհների հետ հաջողվել է անհետանալ: «Քանի դեռ Մահիր Ջավադովը եւ նրա զինակիցները ձերբակալված չեն, խռովությունը կարող է կրկնվել, որովհետեւ որոշ տեղեկությունների համաձայն, նրանց աջակցում են հանրապետության մի շարք շրջաններում», նշեց ելույթ ունեցողը: Դատախազը հանդես եկավ սենսացիոն մի հայտարարությամբ, ըստ որի զանգվածային անկարգությունները շրջաններում հրահրել է հայկական կողմը: Նրա խոսքերով, դեռեւս Ղազախում եւ Աղստաֆայում ապստամբների ղեկավարները սերտ կապեր էին պահպանում սահմանամերձ հայկական շրջանների իշխանությունների հետ: Վերջիններս, ըստ դատախազի, զգալի քանակությամբ տարադրամ եւ զինամթերք էին տրամադրում խռովարարներին, որոնք իրենց հերթին հայերին վաճառում էին հանրապետության հարստությունները, մասնավորապես վառելիք:

# տեղական

ՀՌԱԿ

## Սոցիալ-տնտեսական ծրագրի եւ բյուջեի քննարկում

Մարտի 17-ին տեղի ունեցավ ՀՌԱԿ Հանրապետական վարչության հերթական նիստը, որը քննարկեց Հանրապետական վարչության որոշումների կատարման ընթացքի, հասարակական կարծիքի բաժնի աշխատանքային ծրագրի հաստատման, Հանրապետության 1995 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի եւ բյուջեի, եղեռնի 80-ամյակի միջոցառումների հետ առնչվող եւ ընթացիկ այլ հարցեր: Առաջին հարցի մասին զեկուցեց ՀՌԱԿ ՀՎ ատենապետ Լեւոն Բաբայանը, որը տեղեկացրեց, թե ՀՌԱԿ ՀՎ-ն 1995-ի հունվարից ի վեր գումարել է 10 հերթական եւ 5 արտահերթ նիստեր, որոնց ընթացքում քննարկվել է 23 կազմակերպչական եւ կազմակերպչական հարց՝ ընդունելով 34 որոշում, դրանցից չի գործադրվել 3-ը: ՀՌԱԿ ՀՎ անդամները այն կարծիքը հայտնեցին, որ անհրաժեշտ է վիճակագրական վերլուծություն կատարել եւ ըստ այդմ գնահատել կատարված աշխատանքները: Որոշվեց հաջորդ նիստին դարձյալ անդրադառնալ հարցին: ՀՌԱԿ ՀՎ-ը քննարկեց նաեւ հասարակական կարծիքի բաժնի աշխատանքային ծրագիրը, որը հաստատելուց հետո հանձնարարեց հաջորդ նիստին ներկայացնել կոնկրետ միջոցառումների ամսական պլան: Հանրապետության 1995 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի եւ բյուջեի մասին զեկուցեցին ՀՀ ԳԽ պատգամավորներ Մելս (Սամվել) Սահակյանը եւ Սամվել Տոնոյանը: Քննարկման ընթացքում ՀՌԱԿ ՀՎ անդամները իրենց դիտողությունները ու քննադատական մոտեցումները արտահայտեցին կառավարության ներկայացրած ծրագրի շուրջ: Մասնավորապես քննադատվում էր կառավարության հարկային եւ վարկային քաղաքականությունը, սեփականաշնորհման հետ կապված թերությունները ու գյուղատնտեսության եւ արդյունաբերության բնագավառներում առկա իրավիճակը: ՀՌԱԿ ՀՎ-ն որոշեց խորհրդարանական քննարկումների ընթացքում կառավարության ծրագրում փոփոխություններ եւ առաջարկներ ներկայացնել, որոնց հաշվի առնելու դեպքում միայն կողմ քվեարկել ծրագրին ու բյուջեին: ՀՌԱԿ ՀՎ-ն կարեւորելով եղեռնի 80-ամյակի միջոցառումները, որոշեց երեքշաբթի օրը հրավիրել արտահերթ նիստ այդ հարցով: Նիստի ընթացքում ՀՎ-ը քննարկելով ՀՌԱԿ «Արտաշատ» ակումբի գոյատման հարցը, որոշեց հաստատել այն: Նիստի ավարտին վարչության անդամները շնորհավորեցին միմյանց՝ «Պայքար» ամսագրի առաջին համարի լույս ընծայման առիթով: ■

ՄԵԾԱՄՈՐ

## Ատոմակայանի ֆիզիկական թողարկման աշխատանքները կսկսվեն մայիսին

Ինչպես հայտնի է, վերջերս Հայաստանում էր գտնվում Ռուսաստանի ատոմային էներգետիկայի բնագավառի մասնագետներից կազմված մի պատվիրակություն Ռուսաստանի ատոմային էներգետիկայի փոխնախարար Լեւ Ռյաբեւի գլխավորությամբ: Այցելելով հայկական ատոմակայան եւ ծանոթանալով անցած ամիսների ընթացքում կատարված աշխատանքներին, ռուս մասնագետները ընդհանուր առմամբ դրական էին գնահատել դրանք: Մարտի 18-ին կայացած մամուլի ասուլիսում, որին մասնակցում էին Լեւ Ռյաբեւը, փոխնախարար Վիգեն Չիտչյանն ու էներգետիկայի նախարար Միրոն Շիշմանյանը, պրն. Չիտչյանը հայտարարեց, թե ինչպես եւ նախատեսվում էր, հիմնական վերանորոգման աշխատանքները կավարտվեն մինչեւ ապրիլի մեկը, իսկ ապրիլին կանցկացվեն հիմնական համակարգերի ստուգումները: Մայիսին կսկսվի ատոմակայանի վերագործարկման առաջին եւ ամենակարեւոր փուլը՝ ֆիզիկական գործարկումը: Այնուհետեւ փոխնախարարը ներկայացրեց որոշ թվեր, որոնցից պարզ դարձավ, որ կատարվել է հսկայական աշխատանք. բավական է նշել միայն, որ խականացվել է 330 օղային չվերը, վերագործարկման համար անհրաժեշտ նյութերն ու սարքավորումները հիմնականում բերվել են Ռուսաստանից (3820 անուն) եւ այլն: Հետազոտությունները ցույց են տվել, որ ատոմակայանը տեղաբաշխված է սալի վրա, եւ որեւէ ճեղք չկա, կամ, այլ կերպ ասած, սեյսմակայունության առումով իրավիճակը բարվոք է:

Իր հերթին ռուս փոխնախարարը հայտարարեց, թե հիմնական աշխատանքներն ուղղված են անվտանգության բարձրացմանը, ու՝ թեեւ առայժմ կան որոշ նյութական դժվարություններ, այնուամենայնիվ դրանք հաղթահարելի են: Համենայն դեպս Ռուսաստանի ֆինանսների նախարարը խոստացել է ինչ-որ կերպ լուծել այդ հարցը: Տեղեկացնենք, որ առաջիկայում Ռուսաստանից կհրավիրվեն մի քանի առաջնակարգ մասնագետներ հայկական ատոմակայանում աշխատելու համար: Իսկ պրն. Ռյաբեւը հայտարարեց նաեւ, որ երբ ամեն ինչ բարեհաջող ընթանա, ապա ատոմակայանն արդեն հունիսին կարող է հոսանք տալ: Ինչ վերաբերում է ատոմակայանի հայ-ռուսական համատեղ ձեռնարկության կարգավիճակի շուրջ խոսակցություններին, ապա եւ պրն. Չիտչյանը, եւ պրն. Ռյաբեւը հայտարարեցին, թե պայմանավորվածություն կա այդ հարցը մինչեւ շահագործումը չքննարկել: Կարեւոր է նաեւ մեկ այլ խնդիր. բարեհաջող վերագործարկման դեպքում դեռ որքա՞ն կարող է աշխատել ատոմակայանը: Ըստ պրն. Չիտչյանի, մինչեւ հաջորդ դարի սկիզբը: Իսկ պրն. Ռյաբեւն այդ առթիվ պարզապես տեղեկացրեց, թե համենայն դեպս վերաբացվելիք ռեակտորի շահագործման ժամկետը 30 տարի է, իսկ այն աշխատել է ընդամենը 9 տարի:

Հայտնի է նաեւ, որ հիմնական խնդիրներից մեկը՝ ռադիոակտիվ թափոնների հարցը, մինչեւ վերջերս մնում էր չլուծված: Համենայն դեպս այս հարցի մասին, որպես կանոն, զերադասում են չխոսել: Մեր այն հարցին, թե ինչպես է լուծվելու այդ խնդիրը, պատասխանը միանշանակ էր. այնպես, ինչպես նախկինում: Այլ կերպ ասած, օգտագործված վառելիքը կարելի է վերամշակման ուղարկել այնտեղ, որտեղ դա ավելի հարմար է, իսկ նոր տեխնոլոգիաները թույլ են տալիս որոշ ռադիոակտիվ թափոններ պահեստավորել տեղում մինչեւ 50 տարի ժամկետով: Ինչ վերաբերում է ատոմակայանի վերագործարկման հետ կապված բնակչության էվակուացիայի պլանին (փախչելու ոչինչ չկա, այդպիսի պլան միշտ էլ եղել է եւ նախատեսված է «համենայն դեպս»), ապա պրն. Չիտչյանը տեղեկացրեց, թե առաջիկայում եւ մամուլի, եւ հեռուստատեսության միջոցով բնակչությունը կծանոթանա նախատեսված միջոցառումներին եւ համապատասխան գիտելիքներ կստանա: Հուսով ենք, որ այս միջոցառումները խուճապ չեն առաջացնի բնակչության շրջանում, մանավանդ, որ դրանք վաղուց արդեն սովորական են Արեւմուտքի զարգացած երկրներում: Իսկ միջուկային տերություն լինելը ոչ միայն պատվաբեր է, այլեւ պարտավորեցնող:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



Մեծամորի մեծ պտուղներ (կամ հոկտեմբերին Արմավիրում)

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅՐԵՆԻՔ

## «Պայքարը» մայր հայրենիքում

*Սկիզբը էջ 1*

Վստահ ենք, որ նրա դարձը, մայր հայրենիքում կյանքը շարունակելու հանգամանքն, անշուշտ, նպաստավոր ու բարենպաստ կլինի «Պայքարի» հետագա գործունեության համար: Այն խնդիր ունի ոչ միայն պահպանելու իր ավանդական դիմագիծը, այլեւ լինելով հայ գիտական, գրական եւ ընդհանրապես հասարակական միտքը կերտող ստեղծագործական մտավորականության համար արդեն իսկ անհամեմատ մատչելի, ավանդական միտումներն ու նորաստեղծ ուղղվածությունները զարգացնելուն զուգահեռ, պետք է խորացնի իր ազգանվեր գործը՝ ստեղծագործական առավել լայն դաշտ եւ գործունեության միջավայր ապահովելով թե իր եւ թե իր հետ համագործակցող հեղինակների համար:

Գիտատեխնիկական, լրատվական, հասարակական-քաղաքական, վերլուծական, ագրային, գրական մշակութային նյութերը, որոնք պարբերաբար կտպագրվեն ամսագրում, անկասկած, կլինեն ի նպաստ Հայոց նորաստեղծ պետականության ամրապնդմանն ու զարգացմանը, ինչպես նաեւ ժողովրդավարության ու ազատականության գաղափարների [illegible] ու տարածմանը:

Լինելով «մեկ ժողովուրդ՝ մեկ նպատակ» սկզբունքից, «Պայքարը» կլինի անաչառ խոսափողը, որը հնարավորություն կտա հայրենիքի ու սփյուռքի մտավորականությանն ու մասնագետներին [illegible] իրենց մտորումները, գաղափարները, [illegible] վարկածներն [illegible] հասցնել ժողովրդին, [illegible] նրա առջեւ ծառացած բազմակողմ ու բազմաթիվ, հրատապ լուծում պահանջող խնդիրները կյանքի [illegible]:

…ահա, ընթերցողի սեղանին է «Պայքարի» 1995 թ. թիվ 1-ը:

Համարը բացվում է ՌԱԿ Հանրապետական վարչության եւ ՌԱԿ մամլո կենտրոնական դիվանի ողջույնի խոսքով, որտեղ միաժամանակ համառոտակի շարադրված են «Պայքարի» գործունեության ուղղվածություններն ու անելիքները: Այնուհետեւ Հայաստանի ազգային գրադարանի գլխավոր մատենագետ Գրիգոր Գույումջյանը «Պայքարի ուղին» վերնագրով հոդվածում մանրամասն ներկայացնում է ամսագրի պատմությունը՝ տարբեր փուլերում նրա գործունեության բոլոր բնագավառներով հանդերձ: Օրինականության նկատմամբ ՀՌԱԿ-ի դիրքորոշմանն է նվիրված իրավաբանական գիտությունների դոկտոր Վլադիմիր Նազարյանի «Ռամկավար ազատականության գոյածեւն օրինականությունն է» ընդարձակ հոդվածը, իսկ տնտեսական գիտությունների թեկնածու Գագիկ Գալստյանի «Ազատական տնտեսության գինը» հոդվածը պարզաբանում է շուկայական տնտեսության առանձնահատկություններն ու դրանից բխող հետեւանքները: «Վահան Թեքեյան նվիրյալը» արժեքավոր ու հետաքրքիր հրապարակմամբ, որը նվիրված է մեծ բանաստեղծի մահվան 50-ամյակին, բանասիրական գիտությունների դոկտոր Վազգեն Գաբրիելյանն իր նորովի մոտեցմամբ բացում է Թեքեյան մարդու կերպարը, ծանոթացնում է նրա նուրբ հոգու գաղտնիքներին: Լեռնային Ղարաբաղի պատմության վերաբերյալ նոր հայեցակետ է պատմական գիտությունների դոկտոր Բորիս Բալայանի «Լեռնային Ղարաբաղի պետական կառույցվածքների կազմավորումը 18-րդ դարում» ուսումնասիրությունը, որը լույս է սփռում հայ իշխանական ոչ վաղ անցյալի փոխհարաբերությունների վրա, որոշ [illegible] շեշտելով դրանց վերաբերյալ ավանդական պատկերացումները, իսկ պատմական գիտությունների դոկտոր Աւետիս Յափուջյանի «Ազգային սանփլուգումը Լոզանի մեջ» հոդվածը լուսաբանում է Լոզանի խորհրդաժողովում հայկական հարցի վիժեցման բուն պատճառները: Բանասիրական գիտությունների թեկնածու Վերժինե Սվազլյանի «Կիլիկիայի հայության ազատատենչ երգերը» հրապարակումը ներկայացնում է Մեծ եղեռնի եւ հետագա տարիների ժողովրդական երգերը, որոնցում իշխում է պայքարի, գոյատեւման, ազատության ոգին: Ամսագրում թարգմանաբար ներկայացված են տեսական, քաղաքական բնույթի մի շարք հոդվածներ (Հենրի Դ. Ման՝ «Տնտեսական ազատականություն եւ տնտեսական զարգացում», Կառլ Պոպեր՝ «Դեմոկրատիա», Լեւ Ռեյսներ՝ «Թեւերից դեպի կենտրոն», Անդրե Ֆրանկ՝ «Տնտեսության հեգնանքները համաշխարհային քաղաքականության մեջ»-վերջինը՝ փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Թադեւոսյանի վերաշարադրմամբ եւ մեկնաբանությամբ), որոնք անշուշտ, համապատասխանաբար կնպաստեն ընթերցողի կողմնորոշումը նոր իրավիճակներում ու պայմաններում:

Հարավային ուղղությունում Ռուսաստանի ռազմավարության մեկնաբանությունն է կատարել պատմական գիտությունների թեկնածու Ռոզա Գաբրիելյանը, իսկ Ֆիլիպ Քեյլանը «Ռումբ Քեռի Իոսիֆի համար» վերնագրով գրախոսությամբ ընթերցողին ծանոթացնում է Դեյվիդ Հոլովեյի «Ստալինը եւ ռումբը» գրքին: Ամսագիրը եզրափակվում է «Միջազգային մամուլը եւ Հայաստանը» բաժինը, որը սիրով կազմել ու ամսագրին է տրամադրել Գրիգոր Քեոսեյանը:

Բարի երթ «Պայքարին» Մայր հայրենիքում: ■

## Կաթողիկոսական ընտրության հարցը՝ հանրահավաքում

Մարտի 18-ին Օպերայի հրապարակում Ազգային Միաւորութեան ուխտի հանրահաւաքին Ռաֆիկ Համբարձումեանը յայտարարեց, որ, իբր, կաթողիկոսական ընտրութիւնների կապակցութեամբ Հայաստանի նախագահի յայտնի հարցազրոյցը բազմութիւնների ճնշման արդիւնք էր: Ըստ նրան, եթէ նախագահը վստահ լինէր, որ ժողովրդի մեծամասնութիւնը Գարեգին Բ վեհափառի կողմն է, նման յայտարարութիւն չէր անի:

Ռ. Համբարձումեանը դարձեալ շեշտելով, որ արժանաւորագոյնը իր կարծիքով Ն. Ս. Օ. Գարեգին երկրորդն է, միաժամանակ սխալ համարեց նախագահի քայլը՝ իր ամբողջական համերաշխութիւնը յայտնելով այդ առթիւ Ռամկավար Ազատական կուսակցութեան տարածած յայտարարութեանը: Նա աւելացրեց, որ նախագահը այդ անտարբերութիւնը փոխհատուցելու մէկ ճանապարհ ունի. ս. թ. ապրիլի 2-ին Օպերային թատրոնի դահլիճում հրաւիրի Աշխարհաժողով՝ Ազգային եկեղեցական ժողովի պատգամաւորների նիստ, որը դրսում հաւաքուած ժողովրդի մասնակցութեամբ անուանի Ամենայն Հայոց կաթողիկոսին, իսկ ապրիլի 3-ին Ազգային եկեղեցական ժողովը վաւերացնի այդ որոշումը: Հրապարակուեց ուխտի կոչը ուղղուած ժողովրդին, իշխանութիւններին, կուսակցութիւններին, լրատու միջոցներին, որտեղ մինչեւ կաթողիկոսի ընտրութեան օրը՝ ապրիլի 3-ը, «Հայոց նոր մուտքի ծանրաձները դէպի Ս. Էջմիածին զարդարենք իրար հետ դէպի տաճար սիրով, խանդավառ, ներողամտութեամբ, որպէսզի Հայոց նորընծայ Քահանայապետը ամուր եւ համատեղ բազմի Ս. Գրիգորի Քրիստոսատեւ եւ լուսածաւալ Աթոռին՝ ծառայեցնելու համար մեր հոգիների միութիւնը ի Յիսուս եւ ի Հայրենիս»:

Թղթակից

ՄԱՄՈՒԼ

## «Բանբերը» կասեցվել է մեկ ամսով, իսկ «Շրջանը» շուտով կվերահրատարակվի

Մարտի 18-ի համարում «Լրագիր» օրաթերթը տեղեկացրել է, թե Քրիստոնեա-դեմոկրատական միության պաշտոնաթերթ «Բանբերի» գործունեությունը կասեցվել է, իսկ նրա գլխավոր խմբագիր Մարտին Յուրիխանյանը, «հավաստի աղբյուրների» համաձայն, պաշտոնանկ է արվել: Ըստ նույն աղբյուրների, պատճառները ֆինանսական են. «Բանբերի» խմբագիրը ամեն ամիս ՔԴՄ-ից ստանալիս է եղել 2500 դոլար, սակայն փետրվարին իջեցրել է աշխատակիցների աշխատավարձը եւ հոնորարը: Այս առթիվ «Բանբեր» օրաթերթի տնօրեն Համլետ Հակոբյանը երեկ հանդես է եկել հայտարարությամբ, որով տեղեկացնում է, թե թերթի գլխավոր խմբագիրն ընդհանրապես չի զբաղվել ֆինանսական գործունեությամբ, իսկ մարտ ամսին աշխատավարձ եւ հոնորար ընդհանրապես չի վճարվել, ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Տնօրենի կարծիքով, «Լրագրի» այդ հրապարակմամբ փորձ է արվում նախընտրական պայքարի շեմին վարկաբեկել Մարտին Յուրիխանյանին: Տեղեկացնենք, որ նա պատրաստվում է իր թեկնածությունն առաջադրել առաջիկա խորհրդարանական ընտրություններում: Եւ այսպես, ի՞նչ է տեղի ունեցել: Ըստ պրն. Յուրիխանյանի, վերջին խորհրդակցության ժամանակ ինքն այն կարծիքն է հայտնել, թե թեեւ անցած մեկ ամսվա ընթացքում թերթն իր սպառման մակարդակով նախավերջին տեղից բարձրացել է երրորդ տեղը (թերթի տպաքանակը 3000 է), այնուամենայնիվ, հաշվի առնելով ընթերցողների իրական թիվը, անհրաժեշտ է տպաքանակն իջեցնել 2500-ի: ՔԴՄ-ի ղեկավար Ազատ Արշակյանը չի համաձայնվել այդ մտքի հետ եւ հայտարարել է, թե թերթի գործունեությունը մեկ ամսով կասեցնում է: Ինքը՝ պրն. Յուրիխանյանը մեկ անգամ եւս հայտարարեց, թե անկախ իրադարձությունների հետագա ընթացքից, որեւէ ցանկություն չունի այլեւս աշխատել «Բանբերում»: Ի դեպ, տեղեկացնենք, որ այս անգամ արդեն ստուգված տեղեկությունների համաձայն, պրն. Յուրիխանյանն անցել է այլ աշխատանքի: Այն է՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ: Այսքանը՝ «Բանբերի» մասին: Ինչ վերաբերում է «Շրջան» շաբաթաթերթին, որի հիմնական աշխատողներն ինչպես հայտնի է, հեռացել են թերթից, ապա երեկ տեղեկացանք, որ «Ազգային պետություն» կազմակերպության ղեկավարներից Գրիգոր Գրիգորյանը իր մոտ է հրավիրել թերթի նախկին աշխատակից Վահան Իշխանյանին եւ առաջարկել կազմակերպել թերթի հիմնական աշխատանքները: Վերջինս, իր իսկ խոսքերով, հավանաբար կընդունի առաջարկը: Տեղեկացնենք, որ նա «Շրջանից» դուրս էր եկել դեռեւս 15 օր առաջ: Ըստ պրն. Իշխանյանի, պատճառն այն էր, որ «գլխավոր խմբագիր Միխայել Հայրապետյանը գաղտնի հանդիպումներ էր ունենում Վազգեն Սարգսյանի հետ եւ հոդվածներ տպագրում նրա քաղաքական հակառակորդների դեմ: Իսկ առիթը եղավ այն, որ Միխայել Հայրապետյանը հայտարարեց, թե «Շրջանը» միանում է «Հայաստան» համահայկական հիմնադրամին եւ փոխանցում աշխատավարձի 5 տոկոսը: Ես դեմ էի դրան: Հիմնադրամի աշխատակիցների ազնվությանը չեմ կասկածում, բայց հրաժարվելուս պատճառները քաղաքական էին: Ես պահանջեցի, որ Միխայել Հայրապետյանը թերթում տպագրի իմ հայտարարությունը այդ որոշմանը չմիանալու մասին: Նա հրաժարվեց, եւ ես հեռացա»: Տեղեկացնենք նաեւ, որ ըստ Վահան Իշխանյանի, «Շրջանը» մոտ ժամանակներս նորից կսկսի լույս տեսնել:

Ա. Բ.

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակւում է 5 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետութեան 47
Ֆաքս 562941, AT&T (7 8852) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայութիւն / 581841
Ոճը եւ տառատեսակները ՊԱՒԷԼ ՊԱԼԱՐԵԱՆԻ
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# Սեփականաշնորհում. ուր ուղղել սեփական հնարավորությունները

**Սեփականաշնորհման գործընթացը թափ է առել: Առաջին խմբի ընտրյալների մեջ են «Կարին», «Տոսպ» ֆաբրիկաները, էլեկտրաապարատների, կոմպրեսորների, «Երազ» գործարանները եւ այլ ոլորտի շուրջ 10 ձեռնարկություն: ՀՀ սեփականաշնորհման եւ ապապետականացման պետական հանձնաժողովը կազմում է նաեւ 58 ձեռնարկությունների ցուցակը, որը կներկայացվի մինչեւ մարտի 20-ը: Ձեռնարկությունների ընտրությունը կատարվում է հաշվի առնելով, թե որքան են բավարար նրանց ֆինանսական եւ հիմնական միջոցները, շենքի պայմանները, կադրերը: Ընտրված ձեռնարկությունների ցուցակը ներկայացվում է նախարարությունների եւ կոլեկտիվների քննարկմանը: Երբ լինում են հիմնավորված առարկություններ, հաշվի են առնվում: Ձեռնարկությունները խումբ-խումբ ներկայացնելը հետեւանք է այն բանի, որ սեփականաշնորհման սերտիֆիկատները բաշխվել են հանրապետության քաղաքացիներին եւ դրանց արժեզրկումից խուսափելու համար անհրաժեշտ է մարդկանց գործարար կյանքին մասնակցելու հնարավորություն ընձեռել:**

**«Ձեր կարծիքով ո՞ր ճյուղերին է անհրաժեշտ պետական հովանավորություն ապահովել, ժամանակի խնդիրներին համապատասխան ինչ նոր արտադրությունների ստեղծման կարիք կա», այս եւ այլ հարցերի պատասխանում է սեփականաշնորհման եւ ապապետականացման պետական հանձնաժողովի անդամ, ՀՀՇ Հանրապետական վարչության փոխնախագահ Կարեն Կոստանդյանը:**

-Մեր խնդիրը սեփականաշնորհման հարցերով զբաղվելն է, սեփականության ձեւ բերելու տնտեսվարմանից մարդկանց հնարավորին չափ հավասար պայմանների մեջ դնելը: Ինչ վերաբերում է նման խոշորածավալ ծրագրերին, շուկան ինքը կձեւավորի դրանց պահանջարկը: Այսօրվա իրավիճակից ելնելով, կարծում եմ, դա պիտի լինի մի ձեռնարկություն, որը շատ էներգատար չլինի: Օրինակ, ադամանդների մշակումը շատ հեշտ եւ եկամտաբեր ճյուղ է: Դրա եւ հումքի տեղափոխությունն է հեշտ ու թեթեւ, եւ իրացման շուկան գոյություն ունի, եւ արտադրությունն է նվազ էներգատար:

Երբ սկսվի մեծածավալ ձեռնարկությունների սեփականաշնորհումը, բավականաչափ խնդիրներ կառաջանան: Որտե՞ղ է նպատակահարմար ներդնել միջոցները: Այս դեպքում անհրաժեշտ է մասնագետների խորհրդատվությունը, արդյունաբերության գիտակ մարդկանց խորհրդատվությունը: Սեփականաշնորհման սերտիֆիկատների գինն այժմ այնքան ցածր է, որովհետեւ մարդիկ չգիտեն ինչպես վարվել դրանց հետ: Հանձնաժողովը պատրաստվում է լրատվության միջոցներով տեղեկացնել հանրապետության քաղաքացիներին սեփականաշնորհվող հիմնարկությունների ֆինանսական վիճակի, կայունության, պայմանների մասին: Հնարավոր է դա էլ ոչ բոլորին ընկալելի լինի: Կստեղծվեն ֆիրմաներ, որ կզբաղվեն այդ հարցերի լուսաբանմամբ:

Բայց վստահ չեմ, որ այս կամ այն ազդեցիկ կարծիքին հետեւելով բոլոր ներդրումները ուղղորդվեն մեկ կամ երկու բնագավառ: Պահանջարկը կրկնակի շուկան: Մրցակցությունը գների եւ շահութաբերության անկում առաջ կբերի եւ ինքնըստինքյան արտադրության բազմազանության կառուցմանը:

Իսկ հեռանկարում պետությունը ըստ անհրաժեշտության եւ նպատակահարմարության կարող է ներդրումներ կատարել տարբեր ոլորտներում:

– Հնարավո՞ր է, որ սերտիֆիկատները կենտրոնանան մի քանի մարդկանց ձեռքում:

- Հավանական է որեւէ գործարար իր ձեռքում կուտակի բաժնետոմսերի մեծ փաթեթ: Ցանկացած ոք կարող է իր սերտիֆիկատները հանել շուկա, երբ իր բաժնեմասը իրեն չի գոհացնում: Սակայն չեմ կարծում, որ բոլորը կհրաժարվեն իրենց բաժնեմասից:

**– Հանրապետության քաղաքական, հնացած կամ կիսավեր տեխնիկայով, սարքավորումներով ո՞րը կարող են միջազգային շուկայի պահանջներին համապատասխանող արտադրանք թողարկել, դուրս գալ համաշխարհային շուկա:**

- Բարդ հարց է: Կձգտենք որքան կարելի է շատ: Ինչ վերաբերում է սարքավորումներին, տեխնոլոգիային, ապա կգործի վարկավորման մեխանիզմը՝ նորը գնելու համար:

Բարձր շահութաբերությամբ ձեռնարկությունները մեծ ներդրումների կարիք ունեն: Սերտիֆիկատները կարող են ներդրման աղբյուր լինել, բայց դրանք ընդհանուր սեփականաշնորհման գույքի միայն 30 տոկոսն են ծածկում, մնացած 70 տոկոսը պետք է գնվի տարադրամով: Մենք մի քիչ ուշացանք սեփականաշնորհման հարցում: Նոր միայն սկսվել է դրա իրական ընթացքը, եւ հուսով եմ, կընթանա առանց լարվածության եւ սոցիալական պայթյունների:

**– ՀՀՇ-ի իշխանության գլուխ գալուց հետո հիմնականում նոր նշանակումներ արվեցին: Չի՞ նշանակում, որ այս հապշտապ սեփականաշնորհումը արվում է հատկապես այդ կուսակցության անդամների համար, եւ հետագայում, այլ գաղափարախոսների իշխանության գալուց հետո, տնտեսական լծակները, միեւնույն է, նրանց ձեռքում կլինեն:**

- Միշտ էլ քաղաքական իշխանությունը բերում է որոշակի շեղումներ: Մարդկայնորեն դա հասկանալի է: Սակայն հուսով եմ, որ այդ ոչ չի լինի: Որքան էլ նշանակումներ արվեն, երբ այդ մարդը տեղում չէ, պրոֆեսիոնալ չէ, վաղ թե ուշ հունից դուրս կմղվի:

**– Նոր նշանակումները, կադրերի բուռն փոփոխությունը պրոֆեսիոնալիզմի կորստի հանգեցրին:**

- Որոշակի կորուստներ մենք ունենք, «Շողակնի» տնօրենը, կոնյակի գործարանի տնօրենը... Պետության համար այդ մասնագետները, որոնցից շատերը հիմնադիր դեր էին ունեցել, մեծ ծառայություններ կարող էին մատուցել: Այդպիսի լուրջ մարդկանց կորուստը, արտահոսքը, գիտնականների արտահոսքը չի կարելի թույլ տալ: Նախկին Խորհրդային Միության տարածքում այնքան փոքր Հայաստանը գիտական մեծ ներուժ ուներ: Մենք պետք է երկար ճանապարհ անցնենք, որպեսզի դառնանք այնպիսի հզոր պետություն, որ կարողանանք մեր գիտնականներին վարձատրել ինչպես հարկն է: Բայց չի կարելի ինքնահոսի թողնել այնպես, որ մեկ-երկու սերունդ հետո սկսենք զրոյից:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

---

ԹԲԻԼԻՍԻ

## Ռուսական ռազմակայաններ Վրաստանում

ԹԲԻԼԻՍԻ, 20 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Տեղի է ունեցել Վրաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինվորական կոլեգիայի ընդլայնված նիստը, որի ընթացքում Վրաստանի տարածքում տեղաբաշխվելիք ռուսական ռազմակայանների մասին տեղեկատվությամբ ելույթ է ունեցել Վրաստանի պաշտպանության փոխնախարար Գուրամ Նիկոլաշվիլին:

Ռազմակայանների մասին պայմանագրի վերջնական տարբերակը բաղկացած է 42 կետից: Քննարկման ժամանակ տարաձայնություններ են առաջացել ստորագրվելիք պայմանագրի հետեւյալ կետերի վերաբերյալ: Դրանք են՝ Վրաստանի տարածքում ռուսական ռազմակայանների գործունեության ժամկետները, այդ ռազմակայաններում տեղաբաշխվելիք ռազմական տեխնիկայի քանակը եւ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո այդ ռազմակայանների վերացումը:

Պայմանագիրը նախատեսում է, որ ռուսական զորամասերը կտեղաբաշխվեն Վազիանիում, Ախալքալաքում եւ Բաթումում: Այդ նույն զորամասերն էլ իրենց գերատեսչության տակ կվերցնեն նաեւ Աբխազիայում տեղաբաշխված ՌԴ զորամիավորումները:

Միեւնույն ժամանակ ռուսական զորքերի օգտագործելիք բոլոր անշարժ գույքը եւ շինությունները հայտարարվում են Վրաստանի Հանրապետության սեփականություն:

Նիստը որոշել է պայմանագրի նախագիծը, հաշվի առնելով արված դիտողությունները, ներկայացնել Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարի ուսումնասիրմանը:

---

ՀԱՄԱՌՈՏ

## Հարավային Օսիայի կարգավիճակը պետք է որոշվի Վրաստանի ներսում

ԹԲԻԼԻՍԻ, 20 ՄԱՐՏ, ՆԵԳԱ ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեն Վրաստանում ԵԱՀԿ առաքելության ղեկավար Հանսյորգ Այֆֆի հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ Հարավային Օսիայի կարգավիճակը պետք է որոշվի Վրաստանի տարածքային կառուցվածքի եւ սահմանադրության շրջանակներում: Վրաստանի ղեկավարի մամուլի ծառայության հաղորդման համաձայն, հիշյալ հանդիպման ընթացքում քննարկվել են Վլադիկավկազում անցկացված «կլոր սեղանի» արդյունքները, որին մասնակցում էին [illegible] քաղաքական կուսակցությունների եւ Ցխինվալիի տարածաշրջանի հասարակայնության ներկայացուցիչները: Էդուարդ Շեւարդնաձեն խիստ գնահատական է տվել Ցխինվալիի տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներում ռուսական կողմի կատարած դերի վերաբերյալ: Նա նշել է, որ փախստականների ընդունումը անհրաժեշտ պայման է հակամարտությունը խաղաղ կարգավորելու համար:

## Վրաստանում եւս կբաշխվեն վաուչերներ

ԹԲԻԼԻՍԻ, 20 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Վրաստանի ղեկավարի այս տարվա մարտի 13-ի հրամանագրի համաձայն, երկու շաբաթից Վրաստանում պետք է սկսվի սեփականաշնորհման սերտիֆիկատների բաշխումը: Վաուչերի արժեքը 30 դոլար է ազգային դրամանիշի փոխարժեքով: Առաջին հերթին վաուչերներ կստանան Թբիլիսի, Ռուսթավի եւ Քութայիսի քաղաքների բնակիչները: Մինչեւ հունիսի 1-ը սերտիֆիկատների բաշխման գործընթացը պետք է ընդգրկի ողջ հանրապետությունը:

## Նազարբաեւի դիրքերն ամուր են

Ղազախստանի մայրաքաղաքի բնակիչների մեծամասնությունը պաշտպանում է հանրապետության նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի գործողությունները հանրապետությունում խորհրդարանական ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ: Այս մասին վկայում են մայրաքաղաքի Գիլերի ինստիտուտի անցկացրած հասարակական կարծիքի հարցման արդյունքները: Ղազախստանի Գերագույն խորհրդի այն նախկին պատգամավորների խումբը, որոնք այժմ բողոքի հացադուլի միջոցով ձգտում են իրենց կողմը գրավել ընտրողներին, փաստորեն հաջողության հնարավորություններ չունեն: Քանի որ արձակված խորհրդարանի աշխատանքի վերականգնման օգտին արտահայտվել է հարցման մասնակիցների միայն 15,5 տոկոսը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

## Ռուսաստան. Ճգնաժամը ավարտվել է

«Ռուսաստանի տնտեսության ճգնաժամային զարգացման գործընթացը ավարտվում է, եւ դա նշանակում է վերափոխման՝ կայունացման, նոր փուլի անցում», հայտարարել է ՌԴ էկոնոմիկայի նախարար Եվգենի Յասինը: Նա ելույթ է ունեցել մարտի 20-ին Դաշնության խորհրդի խորհրդարանական ունկնդրումներում: Ինչպես հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, նախարարը հանդիպման մասնակիցներին ծանոթացրել է կառավարության երեք տարվա ծրագրին: Յասինը ծրագրի հիմնական խնդիրը համարել է «այս երեք տարիների ընթացքում էկոնոմիկայի կայունացումը եւ դրա աճի վերականգնումը ապահովելու անհրաժեշտությունը», թեեւ աճն սկսվելու հույս ունենալ կարելի է միայն այդ փուլի վերջում:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

---

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Խմբագրությունը ցավակցություն է հայտնում իր աշխատակից Արման Հովհաննիսյանին, հարազատ որդու*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

*անժամանակ մահվան կապակցությամբ:*

---

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Հովսեփյանները խորապես սգում են հարեւանի, պապի*

ԴԱՎԻԹ ՀՈՎՍԵՓԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ

*մահը եւ ցավակցում Մարգարյանի ընտանիքին:*

---

ԵՐԵՎԱՆ

## Մարտի 25-ը՝ շաբաթօրյակ

Երեկ առավոտյան աշխատանքային խորհրդակցությունում քաղխորհրդի նախագահ Վ. Խաչատրյանը հանձնարարեց համապատասխան ծառայություններին (նախ. տեղակալ Վ. Պետրոսյան) սկսել ասֆալտապատման եւ բարեկարգման աշխատանքներ, ըստ որում, մայթերը եւ փողոցների բոլոր հատվածները սալահատակել, որը թեեւ թանկ, բայց առավել դիմացկուն է: Նշվել է ջրամատակարարման հիմնականում բավարար վիճակը: Միաժամանակ հանձնարարվել օպերատիվ շտաբի պետ Ռ. Նազարյանին ստուգումներ կատարել Շենգավիթի շրջանում եւ իրազեկ պահել: Մարտի 25-ը շաբաթօրյակի օր է հայտարարվել հիմնարկ-ձեռնարկությունների եւ բնակչության մասնակցությամբ ([illegible] արդեն լավ օրինակ է տվել դիմացի մանկական զբոսայգու մի մասը մաքրելով նախորդ աշնան տերեւներից ու աղբից, երբ մինչ այդ դիզված տերեւները նորից չտարածվեն, շաբաթ օրը դրանք կհավաքվեն: Մյուս այգիներում դեռ խոր լռություն է:

Դժգոհություն հայտնվեց ստորգետնյա անցումների վիճակից (լուսավորություն, հակասանիտարական արգելված առեւտուր): Վերջինի համար շրջգործկոմներին եւ ոչ պետական առեւտրի կազմակերպման ձեռնարկությանը դիտողություն արվեց թույլտվության համար:

Լրատվական [illegible] հայտնեցին նաեւ, որ մարտի 28-29-[illegible] կլինեն [illegible]

---

ՎԻՃԱՀԱՐՈՒՅՑ

## «Ղրիմցիները չեն հաշտվի իրենց սահմանադրության փոփոխության հետ»

ՄՈՍԿՎԱ, 18 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Մոտ ժամանակներս Ղրիմում իրադրությունը կարող է կտրուկ սրվել», մարտի 17-ին ՌԻԱ-Նովոստի գործակալության թղթակցի հետ հեռախոսազրույցում հայտարարել է Ղրիմի Հանրապետության նախագահի ռազմական հարցերի խորհրդական Պյոտր Չեռնյաշեւիչը: Նրա խոսքերով, նախագահ Յուրի Մեշկովը խիստ բացասական դիրքորոշում է ցուցաբերում Ուկրաինայի Գերագույն խորհրդի գործողություններին, որը փոխել է թերակղզու սահմանադրությունը: Ղրիմի նախագահը այդ քայլը համարել է չմտածված:

Սակայն, ընդհանուր առմամբ, Ղրիմի իշխանությունները առայժմ սպասողական կեցվածք են բռնել, նշել է նախագահի խորհրդականը: Դեռեւս իրադրությունը Ղրիմում արտաքնապես հանգիստ է: Բայց ղրիմցիների մեծամասնությունը որոշակի վախ ունի. [illegible] չեն բացառում, որ ուկրաինական իշխանությունները կարող են ինչ-որ ուժային միջոցառումների դիմել:

Ըստ Չեռնյաշեւիչի, հնարավոր է Ղրիմի հիմնախնդրի լուծման մի քանի տարբերակ: Նրա կարծիքով, իրադրության ներկայիս սրումը արդյունք է ուկրաինական պետության փաստորեն արդեն իսկ սկսված քայքայմամբ, երբ որոշ ինքնուրույն քաղաքական ուժեր սկսում են հանդես գալ Ուկրաինայի արեւելյան, հարավային եւ արեւմտյան տարածաշրջանները:

Ղրիմի նախագահի խորհրդականն այն միտքն է հայտնել, որ Ղրիմում իրավիճակի սրումը անհրաժեշտ է միայն նրա համար, որպեսզի համախմբվեն ուժերը բուն Ուկրաինայում, եւ դրանով իսկ փրկվի պետությունը վերահաս կործանումից: Այսուհանդերձ Չեռնյաշեւիչը նշել է, որ Ղրիմի ժողովուրդը երբեք չի հաշտվի իր սահմանադրության փոփոխման հետ: Ուկրաինայի պաշտոնական իշխանությունները ջանում են, որպեսզի Ղրիմը դառնա Ուկրաինայի անբաժան մասը: Բայց դա չի լինի, նշել է խորհրդականը:

## մամուլից

ԱՄԲԻՈՆ

# Անընդունելի միջամտութիւն մը

Ընթերցողները անշուշտ տեղեակ են այն միջամտութեան զոր Հայաստանի Հանրապետութեան նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան կատարեց կաթողիկոսական յառաջիկայ ընտրութիւններուն առիթով:

«Արմէնփրես» լրատու գործակալութեան տնօրէն Աւոս Անանեանի հետ հարցազրոյցի մը ընթացքին նախագահը յայտարարեց, թէ իր թեկնածուն էր Կիլիկիոյ Աթոռի գահակալը՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը:

Պարզ յայտարարութիւն մը աւելի նախագահը հարցազրոյցի մը կերպ միտակին տողանցում, գովասանքը հիւսեց իր թեկնածուին, եւ յստակ ըրաւ, թէ անյայտնօրէն զայն կ'ուզէր տեսնել Ամենայն հայոց հայրապետութեան գահին բազմած:

Այս [illegible] յայտարարութե[illegible] պետութիւն կրօնէ անջատ են, ուրեմն ինչո՞ւ կրնայ իր նախագահին բերնով պարտադրել իր թեկնածուն Լուսաւորչի գահին: Երբ ճնշումը կը կատարուի եկեղեցականներուն վրայ ի նպաստ նախագահական թեկնածուին, երբ բարձրաստիճան կրօնականներ նախագահէն կը սաստուին եւ իրենց թեկնածութիւնը կը պարտաւորուին ետ քաշել, երբ կառավարութեան ենթակայ «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթին մէջ բարձրաստիճան կրօնականներ կը դատափետուին, ուրեմն ո՞ւր մնաց պետութեան եւ կրօնքի անջատ մնալու վարկածը զոր նախագահը եւ նախարարները յաճախ կը յայտարարեն մեզի եւ օտարներուն:

Երբ հարցազրոյցը վարողը կը հարցնէ. «Դուք, ոչ որպէս նախագահ, այլ որպէս քաղաքացի, որպէս հայ, ճնշում: Ճնշում որովհետեւ հանրապետութեան նախագահը աղէն ի յառաջագոյն կը պարտադրէ կայանալիք ընտրութիւններուն արդիւնքը:

Գարեգին Կաթողիկոս կրնայ շատ կարող անձ ըլլալ, շատ զարգացած ըլլալ, անբասիր կենցաղ ունենալ: Սակայն Ազգային եկեղեցական ժողովին կը մնայ իրաւունքը եւ պարտականութիւնը ընտրութեան: Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան ընտրելու այդ իրաւունքն է, որ կը խլէ պատգամաւորներէն: Եթէ իր թեկնածուն պէտք է ընտրուի, այն ատեն ինչո՞ւ պատգամաւորներ աշխարհի ամէն կողմերէն Էջմիածին պէտք է երթան: Մայր Աթոռի միաբաններն թող ընտրեն նախագահին նախասիրածը եւ... վերջ:

Հարցը Գարեգին Կաթողիկոսը չէ այս պարագային: Կաթողիկոսական ընտրութիւններու նախօրեակին նա[illegible]նէն առաջ եւ ետք, հաւանական թեկնածուներու վրայ ճնշում բանեցնելու հրամաններ, եւ ուրիշ կրօնականներ անկեղծութեան հրաւիրեցան նախագահին մօտ իսկ, նախ լսելու հրահանգի ուժ ունեցող առաջարկը:

Եւ այսպէս, նախ Երուսաղէմի Պատրիարք Թորգոմ արք. Մանուկեան (որ նաեւ Էջմիածնի կաթողիկոսական տեղապահն է) յայտարարեց, թէ ինք թեկնածու չէ, եւ իրեն հետեւեցաւ Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդ Խաժակ արք. Պարսամեան: «Ազգ» օրաթերթի հետ հարցազրոյցի մը ընթացքին Խաժակ արք. ըսաւ, ի միջի այլոց. «Ես անկեղծութեամբ կ'արտայայտուիմ եւ անձնապէս համոզուած եմ, որ այդպիսի կարեւոր պաշտօնի արժանի չեմ»: Արքազանը նոյն հարցազրոյցին մէջ կ'ըսէր նաեւ, թէ «... Վերջին շրջանում մի քիչ քաղաքականացուել է կաթողիկոսի ընտրութիւնը»:

Եւ այսպէս, մէկ առ մէկ, բոլոր թեկնածուները բարոյական թէ այլ կերպի ճնշումներով քաշուիլ ստիպուած են, հրապարակը ձգելով միակ թեկնածուի մը:

Իսկ նման բան մը դժբախտութիւն է թէ՛ Հայաստանեայց եկեղեցիին համար եւ թէ հայ ժողովուրդին:

Ինչո՞ւ:

Որովհետեւ համայնավար վարչակարգի փլուզումէն ետք առաջին համահայկական եւ ազատ ընտրութիւնը այս անգամ ճնշումի տակ կը դրուի նոյնինքն Հայաստանի նախագահին կողմէ, եւ այս ձեւով Էջմիածնի մէջ կայանալիք ընտրութիւնը արգահատելի զաւեշտ-ողբերգութեան կը վերածուի:

Ուրեմն հարց կը ծագի՝ ի՞նչ է տարբերութիւնը համայնավար վարչակարգին եւ ներկայ կառավարութեան միջեւ: Եթէ ղեկավարութիւնը, որ իբր թէ չի խառնուիր համայնքի կրօնքի վերաբերող խնդիրներուն եւ կը յայտարարէ թէ կարո՞ղ է արտայայտել ձեր կարծիքը կաթողիկոսական ընտրութիւններու կարգի, կաթողիկոսի հաւանական թեկնածուներու մասին», նախագահը կը պատասխանէ՝ «Ոչ միայն կարող եմ, այլեւ, կարծում եմ, պարտաւոր եմ...»: Եւ ապա յիշելէ ետք, թէ «այսօր Ս. Էջմիածնի միաբանութեան շարքերում կան կաթողիկոսական գահի արժանի թեկնածուներ...», կը հաստատէ «Իմ կարծիքով, Կիլիկիոյ Աթոռի Հայրապետ Գարեգին Բ. Վեհափառն է» իր թեկնածուն, «անուրանալի հեղինակութիւն թէ Էջմիածնի, թէ Կիլիկիոյ աթոռի միաբանական շրջաններում, ինչպէս նաեւ Հայաստանի եւ սփիւռքի հասարակական զանգուածներում»:

Նախագահ Տէր-Պետրոսեան կը շարունակէ. «... Անձնական արժանաւորութիւնից բացի այս ընտրութիւնը, վստահ եմ, կարող է շրջադարձային դեր խաղալ Հայ առաքելական եկեղեցու նուիրապետական միասնութեան վերականգնման, ինչպէս նաեւ աւելի լայն առումով Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնների կարգաւորման յիրաւի համազգային գործում»:

Նախագահին տրամաբանութիւնը տարօրինակ է, թէեւ համար նպագոյն: Կաթողիկոս մը, որ իր կրօնական-եկեղեցական գործունէութեան առաջին օրէն իսկ ոգի ի բռին աշխատած է Էջմիածնի ենթակայ թեմերը խլելու արտասահմանի մէջ, անձ մը, որ կաթողիկոսանալէ ետք տարիներով յամառօրէն Վազգէն Ա. Վեհափառը օտարած է, սին խոստումներով եւ հասարակական «միաբանութեան» մը եւ գրեթէ բոլոր վերադարձի դուռերը գոցած, անտարակոյս կը դառնայ, նախագահին օրհնութեամբ, [illegible] առաքեալ:

Հայաստանեայց եկեղեցին, այսպէս, ընտրութիւններու նախօրեակին ինքզինք կը գտնէ յատուկ, փուշ եւ խագահին կատարած միջամտութիւնը օրինակ մըն է այն գործելակերպին զոր ան որդեգրած է. եւ այդ գործելակերպը ռամկավարական (democratic) հիմք զուրկ է. նախագահը ինք կը կարգադրէ, ինք կը վճռէ, ինք կը գործադրէ, ... եւ ինք պատասխանատուն հրահանգներ կու տայ: Կառավարութիւն կա՞յ Հայաստանի մէջ, նախարարներու դահլիճ կա՞յ. գրեթէ մոռցած ենք անոնց գոյութիւնը, եւ կամ կը յիշենք այն ատեն երբ նախարարներէն մին յայտարարութիւն մը կատարէ, ինչպէս անցեալ շաբաթ կրթական փոխնախարար Բիլեանը բան մը ըսելով կրթական ծրագիրներ եւ ըսելով որ Հայկական Ցեղասպանութեան մասին դասաւանդութիւն կամ ակնարկ իսկ պէտք չէ կատարուի դպրոցներուն մէջ:

Ափսոս, որ նորանկախ Հայաստանի մէջ տեղի ունենալիք առաջին ազատ կաթողիկոսական ընտրութիւնը նման միջամտութեան մը ենթակայ կ'ըլլայ:

Սակայն եւ վստահ եմ, որ բոլոր պատգամաւորները աշխարհական թէ եկեղեցական, արտասահմանէն թէ ներքին սփիւռքէն եւ Հայաստանէն կատարուող ճնշումները մէկդի դնեն եւ ընտրեն արժանին Ս. Լուսաւորչի գահին:

Ամենայն Հայոց Հայրապետ մը որ վերականգնէ հայկական քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ եւ ներքին սփիւռքի, որ պատնէշ դառնայ զանազան աղանդներու ծաւալումին դէմ, եւ փարատէ Էջմիածին-Անթիլիաս պառակտումը, եւ աւելի մօտէն զբաղի արտասահմանի հայ համայնքներու կրօնական կարիքներով:

Եւ Ամենայն հայոց հայրապետ մը որ բնաւ չյանձնուի պետական միջամտութիւններու եւ պարտադրանքներու:

**ԱՐԱ ԳԱԼԱՅՃԵԱՆ,**
Խմբագիր «The Armenian Mirror-Spectator» շաբաթաթերթի

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅՐԵՆԻՔ

# Արդեօք Սփիւռքը կ'օգնէ՞ Հայաստանին

**Հաճախ, մանավանդ նրանք, ովքեր սիրում են սփյուռքի դերը հայրենաշինության գործում սահմանափակված տեսնել սոսկ առողջապահության և կրթական մարզերին օգնություն հասցնելու շրջանակներում, անհարկի վերաբերմունքով, հանդիմանական շեշտով, նույնիսկ հրապարակավ (դժբախտաբար մեկ անգամ նաև մեր թերթում) փորձում են ձաղկել սփյուռքին, զարմանալի կարծրությամբ անտեսելով այն ամբողջ աշխատանքն ու զոհողությունները, որոնք սփյուռքից ժամանակին ուղղված են այդ երկու բնագավառներին: Հեռատեսական չէ՞ր լինի, եթե մեր համապատասխան նախարարություններն ու գերատեսչությունները ամփոփեին տվյալներով մեր ժողովրդին գեթ մեկ անգամ ցույց տային, թե վերջին 5-7 տարիներին ի՞նչ է արել Սփյուռքը՝ իր բարեգործական և ընկերային կազմակերպություններով, դրանց ետին կանգնած կուսակցություններով, այո՛, չզարմանալի՛ք, կուսակցություններով, անհատներով և վերջիններիս բարեկամ օտար անհատներով ու կազմակերպություններով այդ նույն Հայաստանի առողջապահության մարզի համար: Ամփոփում մի այնպիսի, որպեսզի մեր սփյուռքյան ներկայացուցիչներից ոմանք, և դրանց բերնից կախված մարդիկ, այլևս չհամարձակվեին սփյուռքի երեսին շպրտել՝ ի՞նչ են արել որ...**

**Ընդամենը մեկ օրինակով, բավական դիպվածային, այդ հարցին պատասխանում է սույն Մ. Նահանգներից (միայն մեկ երկրից) Հայաստան առաքված օգնությունների ծավալներին ու տեսականուն լավագույն գիտակ Հարութ Սասունյանը, որի տնօրինության տակ ղեկավարված Միացյալ հայկական ֆոնդի (UAF) 69-րդ օդանավը 2 շաբաթ առաջ հասավ Երևան: Ցույց է տալիս և հայտարարում՝ օգնում ենք, պիտի կօգնենք, պարտավոր ենք օգնել, միայն թե մի՛ նախատեք մեզ, այլ խրախուսեցեք:**

Բոլորս ալ լաւ գիտենք այն բազմաթիւ դժուարութիւնները, որ Հայաստանի ժողովուրդը կը դիմագրաւէ պայքարելով ամենօրեայ ապրուստի դժուարութիւններուն դէմ: Ասոր հետեւանքը կ'ըլլայ յուսախաբութիւն եւ յուսահատութիւն: Երբեմն կը զգանք, թէ շատ աւելին պէտք է ընենք, քան այն՝ ինչ որ կը կատարենք:

Անշուշտ, աւելի զգայուն կը դառնանք, երբ Հայաստանէն ղեկավար մը մեզի կ'ըսէ, թէ բաւականաչափ չենք օգներ: Նման քննադատութիւնը նախատական կը գտնենք յատկապէս, երբ ան կ'արտայայտուի ամբարտաւան ձեւով: Աւելի շինիչ արդիւնք պիտի տար, եթէ երախտապարտ մօտեցում մը ցոյց տրուէր Սփիւռքին անոր տուած օգնութեան համար՝ քաջալերելով որ աւելին կատարուի:

Բարեբախտաբար, երբեմն ուրիշ լուրեր մեր դառնութիւնները կը մեղմացնեն: Ուրիշ տեսակէտէ, Հայաստան շատ աւելի լաւ վիճակի մէջ է քան Խորհրդային Միութեան նախկին շատ մը հանրապետութիւնները, մասամբ՝ Սփիւռքի տուած օժանդակութեան շնորհիւ: Միւս հանրապետութիւնները կա՛մ սփիւռք չունին, եւ կամ՝ իրենց սփիւռքը հարկ եղած չափով չ'օժանդակեր:

Օրինակի համար՝ թրքական «Ջիւմհիւրիէթ» թերթը վերջերս կը տեղեկագրէ, թէ անառողջ պարագաներու պատճառով դիֆթերիայի (կեղծմաշկ) համաճարակ գոյութիւն ունի Ադրբէյջանի մէջ:

Ազերիները կոչ ըրին աշխարհին, որ դիֆթերիայի պատուաստներ ուղարկուին, եւ անմիջական օժանդակութիւն խնդրեցին իրենց գլխաւոր դաշնակիցէն՝ Թուրքիայէն, քանի որ հիւանդութիւնը արագօրէն կը տարածուէր: Բազմաթիւ ազերիներ արդէն մահացեր էին:

Թերթը կը տեղեկագրէ, թէ Թուրքիան Ադրբէյջան ուղարկեց դիֆթերիայի 300 պատուաստ, որ իր պահեստին գրեթէ կէսն էր:

Կարծես այս մեծ նուիրատուութիւն մը եղած ըլլար, Թուրքիոյ առողջապահական նախարարութենէն պաշտօնեայ մը հպարտօրէն ըսաւ. «Մենք միշտ պատրաստ ենք օգնելու մեր ազերի եղբայրներուն: Այս մեր սրբազան պարտականութիւնն է»:

Անհաւատալի է, որ Թուրքիան՝ աշխարհի մեծագոյն երկիրներէն մէկը, անսալով անմիջական օգնութեան խնդրանքի մը իր «ազերի եղբայրներէն», միայն երեք հարիւր պատուաստ կ'ուղարկէ:

Թոյլ տուէք բաղդատել ասիկա ուրիշ նման խնդրանքի մը հետ, որ Հայաստան ըրաւ քանի մը ամիս առաջ: Երբ դիֆթերիան սկսած էր տարածուիլ Հայաստանի մէջ եւ արդէն աւելի քան 30 հոգի մահացած էին, Հայկական Միացեալ Ֆոնդը խնդրանք մը ստացաւ Հայաստանի առողջապահական նախարարութենէն, որ 260,000 դիֆթերիայի պատուաստ ուղարկուի անմիջապէս:

Արագ փնտռտուք մը երեւան հանեց, որ աշխարհի վրայ դեղորայքի հազիւ մի քանի ընկերութիւններ կ'արտադրեն զայն: Անոնցմէ որեւէ մէկը պատրաստ չունէր այդ պատուաստներէն: Անհրաժեշտ էր սպասել անոր արտադրութեան համար, այն ալ շատ սուղ վճարելով:

Գործածելով իր աղբիւրները, Հայկական Միացեալ Ֆոնդը արագօրէն գտաւ 260,000 պատուաստ, նպաստաւոր գինով, Ֆրանսայի եւ Իտալիոյ մէջ գտնուող երկու ընկերութիւններէ: Անմիջապէս օդանաւով փոխադրուելով, պատուաստները կանխեցին հիւանդութեան տարածումը Հայաստանի մէջ եւ յաւելեալ զոհեր խնայեցին հայ բնակչութեան:

Այս օրինակը տալու նպատակը Ֆոնդի աշխատանքին գովասանքը ընել չէ, այլ ցոյց տալ, թէ Սփիւռքը իսկապէս գլխաւոր յենարանն է Հայաստանին: Մինչդեռ Թուրքիոյ նման երկիր մը 300 պատուաստ կ'ուղարկէ, այն ալ շատ ճգնաժամային պահու մը, հայկական կազմակերպութիւն մը, առանձին, 260,000 պատուաստ ուղարկեց իր ժողովուրդի օգնութեան համար:

Այս կը փաստէ, որ Սփիւռքը շատ բան կրնայ ընել Հայաստանի համար: Արդէն բաւական ըրած է, եւ կրնայ նոյնիսկ աւելին ալ ընել:

**ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ,**
Լոս Անճելըս

ԵՐԵՎԱՆ

# Մայրության ֆոնդ. Օգնականները օգնության կարիք են զգում

Մայրության ֆոնդը, որ ստեղծվել է 1989-ին, վերակառուցվել է '91-ին, խնդիր է դրել օգնել 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին: Արդեն գործ ունի 4320 բազմազավակ մայրերի հետ: Ֆոնդի վարչության նախագահ, բժշկագիտության թեկնածու Սուսաննա Այվազյանը և պատասխանատու քարտուղար Սուսաննա Ալեքսանյանը հայտնեցին, որ կազմակերպության հիմնական գործունեությունը ծավալվել է Երևանում, մասնաճյուղեր կստեղծվեն բոլոր շրջաններում, սակայն առայժմ այդպիսի ծավալի աշխատանքի համար նյութական միջոցներ չունեն: Ֆոնդում ձևավորված են 11 հանձնախմբեր (առողջապահության և մանկածնության, իրավաբանական, սոցիոլոգիական հետազոտությունների, երիտասարդ ընտանիքների, մշակութային և այլն):

Անցած տարիներին մայրության

ֆոնդը ֆինանսական և բարոյական աջակցություն ստացել բազմաթիվ պետական ձեռնարկություններից ու անհատ բարեգործներից (կաշվե գալանտերեայի ֆաբրիկա, կոշիկի «Վան» արտադրական միավորում, կոշիկի 4-րդ, Քանաքեռի կոշիկի ֆաբրիկաներ, «Հայգորգ» միավորում, «Այստուհետ» բամբակեղենի ընկերություն, [illegible] և կանեռային բուսերներ:

Մայրության ֆոնդի աշխատանքին, շատ է խոչընդոտում տարածք չունենալը. «ոչ կառավարությունը, ոչ էլ քաղխորհուրդը այս շատ կարևոր խնդիրը չեն լուծում («Լավ է, «Այստուհետ» բամբակեղենի միավորումը անվճար հատկացրել է տարածք»): Այս նույն կազմակերպությունը հովանավորում է Մասիսի շրջանի բազմազավակ մայրերի առողջության հետազոտման ծրագիրը: Կան նաև այլ ծրագրեր, որոնց իրականացողներ են պետք:

Յ. Ս.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ լուսավորության նախարարությունը հայտնում է, որ 1995 թվականի մարտի 25-ին կազմակերպվում է նախարարության ՍՏԶ-ի օգտագործումից դուրս գրված ԳԱԶ 53, ԵՐԱԶ, ՈՒԱԶ, Մոսկվիչ 2141, ԿԱՎԶ 685, ԳԱԶ 31, ԳԱԶ 24, Մոսկվիչ ԻԺ 27 15 մակնիշի ավտոմեքենաների աճուրդային վաճառք: Վաճառքը տեղի կունենա Մ. Սանուկյան փողոց 32, ՍՏԶ-ում, ժամը 11:00:

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

*1. Կոշիկի կաղապարների արտադրության հաստոցներ (Իտալիա)–3 հատ:*
*2. Գուլպայի արտադրության հաստոցներ 03DC (ՌԴ)–7 հատ:*
*3. Դիզել գեներատոր 8 կվտ հզորության (ՌԴ)–1 հատ:*
*Հեռախոս 58-22-43*

ԶԻՆԱՎԱՃԱՌՔ

# Ռուսաստանին տեղ կմնա՞ զենքի արեւելաեվրոպական շուկայում

«Ավիեյշն ուիք ընդ սփեյս թեքնոլոջի» հանդեսի տվյալների համաձայն, անցյալ տարի Ամերիկայի Միացյալ Նահանգները զենքի համաշխարհային առեւտրում իր բաժինը հասցրել է 72,6 տոկոսի, որ մեկ երրորդով գերազանցում է 1992 թ. մակարդակը:

Օրինական առեւտրի առավել եկամտաբեր ոլորտներից մեկում Վաշինգտոնի բաժնի ներկայիս ավելացումը, որքանով կարելի է դատել, տեղի է ունեցել Ռուսաստանի հաշվին, որի արտահանությունն անցյալ տարի կայունացել է մոտ 2 միլիարդ դոլարի մակարդակի վրա: «Լոկհիդի», «Ջեներալ Դայնեմիքսի» եւ ամերիկյան ռազմարդյունաբերական համալիրի մյուս խոշորագույն ներկայացուցիչների զոհերն այս անգամ դարձան Արեւմտյան Եվրոպայի՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Իտալիայի զինագործական ֆիրմաները, որոնց համախառն եկամուտը վերջին երկու տարում 4,9-ից իջավ 2,6 միլիարդ դոլարի:

Պատահական չէ, որ սպառազինությունների միջազգային առեւտրի բնագավառում ԱՄՆ-ի քաղաքականության հիմունքների վերաբերյալ նախագահ Բիլ Քլինթոնի վերջերս հրապարակած դիրեկտիվը տագնապով ընդունվեց Եվրոպայի մայրաքաղաքներում: Նախագահն իր ռազմարդյունաբերական համալիրում թույլատրել է Արեւելյան Եվրոպայում եւ Մերձբալթիկայում նախկին ԽՍՀՄ-ի ազդեցության ոլորտը բավականաչափ հասունացած դաշտ համարել այն ամերիկյան զամբյուղի մեջ դնելու համար: Եվրոպայի համար վիրավորական է, որ իր մասին դիրեկտիվներում ոչ մի խոսք չի ասվում, թեեւ Եվրոպան զգալի միջոցներ է ներդրել խորհրդային կայսրությունից անջատված մասում եւ կարծես թե պարգեւատրման ավելի մեծ իրավունքներ ունի, քան խոստացածները, բայց մյուս Վաշինգտոնը: Եվրոպան չի հասկանում, թե ինչու, այնուամենայնիվ, նախապատվությունը տրվի ամերիկյան զինագործական ֆիրմաներին: Պաշտպանության փոխնախարար Ջոն Դեյչին հանձնարարված է շարունակել բացատրական աշխատանքը Հին աշխարհամասում:

ՆԱՏՕ-ի ծիրով [illegible] շրջանում իր զինագործների համար առավել եկամտաբեր տեղամասեր գտնելու Սպիտակ տան ձգտումը Արեւելյան Եվրոպային դրդում է դաշնակիցներ փնտրել: Գերմանիայում վերջերս կոչ արվեց համագործակցություն հաստատել Ռուսաստանի հետ, որի զենքով սպառազինված է ամբողջ Արեւելյան Եվրոպան: Արեւելաեվրոպացիները, որքան էլ երազեն ռուսական տանկերը փոխարինել «Աբրամսներով» կամ «Լեոպարդներով» եւ դրանցով մուտք գործել ՆԱՏՕ, նրանց փողը չի բավականացնի ոչ միայն նոր տեխնիկայի, այլեւ զինվորականների վերապատրաստման համար: Շրջանում արդեն առկա ռուսական զենքի արդիականացումը, դրա գործողության ժամկետը կերկարաձգի եւս 20-30 տարով, իսկ մինչ այդ տնտեսությունը կամրապնդվի, կհայտնվեն ազատ փողեր եւ տեղի կունենա զինվորական կադրերի փոփոխում:

Ներկայիս աննախանձելի տնտեսական վիճակում գտնվող Ռուսաստանի համար նախկին խորհրդային ազդեցության ոլորտի յուրացման գործում Արեւմուտքի հետ նման կոոպերացումը հեռանկարային է թվում. մասնակցությունն եկամտաբեր գործին, ինչպես նաեւ շրջանի [illegible] կուրսի հետաձգում մինչեւ Ռուսաստանում լավ ժամանակներ սկսվելը:

Շատերը կցանկանային օգտվել Ռուսաստանի բացթողումներից: Առաջիններից մեկը խորհրդային ազդեցության նախկին գոտի ներխուժեց Իսրայելը: Այսօր Թել Ավիվը հոգատարությամբ է շրջապատել Չեխիային, որն Արեւելյան Եվրոպայում ունի զրահատանկային տեխնիկայի ամենախոշոր համակարգերից մեկը: Հունվարին Պրահայում անցկացվեց իսրայելա-չեխական խորհրդաժողով, որտեղ իսրայելցիները տանտերերին առաջարկեցին T-72 տանկերը լիովին վերահանդերձավորել կրակի կառավարման սարքերով, օպտիկայով եւ ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանող կապի համակարգերով: Թել Ավիվը պատրաստ է նույնիսկ մատակարարել անհրաժեշտ տրամաչափի զինամթերք, որի թողարկումը սկսվել է Իսրայելի պաշտպանական արդյունաբերության գործարաններում:

Եթե ընդունենք իրադարձությունների աննպաստ զարգացումը, ապա Արեւելյան Եվրոպայի շուկաներից Ռուսաստանի դուրս մղումը սկզբունքորեն չի հանգեցնի զենքի համաշխարհային առեւտրում Ռուսաստանի բաժնի էական կրճատման: Սոցիալիզմի համակարգի փլուզման կապակցությամբ երկրների այդ խմբի հետ ռազմատեխնիկական համագործակցությունը հասել է նվազագույն մակարդակի:

Բայց ավելի հեշտ է դիրքերը կորցնել, քան դրանք վերադարձնել: Ռուսաստանի հիմնական մրցակիցները չեն խորշի արմունկներով գործելուց: Մարտի կեսերին Աբու Դաբիում կայանալիք զենքի «Իդեքս-95» ցուցահանդեսում ԱՄՆ-ը նախատեսում է անցկացնել խորհրդաժողով, որտեղ ռուսական զենքի որակի վարկաբեկման համար կօգտագործվեն Չեչնիայի հակամարտությունը, ինչպես նաեւ Իրաքի դեմ ձեռնարկված «Անապատի փոթորիկ» գործողության արդյունքները:

*«Իզվեստիա», 15 մարտ 1995 թ.*

ՀԱՄԱՌՈՏ

## Ռուսաստանն անդամակցում է ԱԽՏՀ-ին

ԿՈՒԱԼԱ ԼՈՒՄՊՈՒՐ, 20 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Այցով Սինգապուրում գտնվող Ռուսաստանի փոխարտգործնախարար Ալեքսանդր Պանովը մարտի 17-ին Ասիա-Խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ԱԽՏՀ) քարտուղարության նախագահ Սեյծիրո Իմանիշիին Ռուսաստանի անդամակցության պաշտոնական հայտ ներկայացրեց: Ռուսաստանը հույս ունի, որ իր հայտը կքննարկվի կազմակերպության անդամ երկրների հերթական գագաթաժողովում, որն այս տարվա աշնանը տեղի կունենա Ճապոնիայի Օսակա քաղաքում: 1989 թ. ստեղծված կազմակերպությունը ներկայումս միավորում է Ասիա-Խաղաղօվկիանոսյան շրջանի 18 երկիր ու տարածք, ներառյալ Ավստրալիան, Կանադան, Չինաստանը, ԱՄՆ-ը, Ճապոնիան, Հարավարեւելյան Ասիայի պետությունների կազմակերպության երկրները:

## Պակիստան. Եղբայրն ընդդեմ Բհուտոյի

Պակիստանի վարչապետի եղբայր Մուրթազա Բհուտոն Կարաչիում հայտարարել է Պակիստանի կառավարող ժողովրդավարական կուսակցության պառակտման մասին եւ պահանջել է Բենազիր Բհուտոյի վարչակազմի հրաժարականը: Նա իր կողմնակիցների հանրահավաքում ասել է, թե ներկայիս կառավարությունը բարոյական իրավունք չունի մնալու իշխանության գլուխ, քանի որ այն ի վիճակի չէ կարգուկանոն պահպանել Պակիստանի խոշորագույն քաղաք Կարաչիում, որտեղ մի քանի ամիս շարունակ չեն դադարում միջհամայնքային արյունահեղ ընդհարումները:

*ՖՐԱՆՍ ՊՐԵՍ*

## Նյու Յորք. Մահապատիժը կարող է վերականգնվել

Իշխանության գլուխ անցնելուց երկու ամիս անց Նյու Յորքի նոր նահանգապետը՝ հանրապետական Ջորջ Պատակին ուզում է իրականացնել 1994 թ. ընտրարշավի ժամանակ իր տված այն

խոստումը, որ Նյու Յորքը կդառնի ԱՄՆ-ում մահապատիժը վերականգնած 38-րդ նահանգը: Նյու Յորքի նահանգային սենատը մարտի սկզբներին այդ ոգով մի փաստաթուղթ ընդունեց, որը դեռ պետք է հաստատվի ստորին պալատում:

Առաջին անգամը չէ, որ Նյու Յորքում փորձում են վերականգնել մահապատիժը: Դեռ 1976 թ., երբ ԱՄՆ-ի Գերագույն դատարանը որոշեց վերականգնել առավելագույն պատժաչափը, Նյու Յորքում այդ օրինագիծը չհաստատվեց եւ մինչեւ անցյալ տարի չէր ընդունվել դեմոկրատ նահանգապետի ընդդիմության պատճառով:

Ջորջ Պատակիի ձեռնարկմանը ամբողջ ուժով ընդդիմանում է նրա մանկության երբեմնի ընկերներից մեկը՝ Նաթանիել Քարտերը: Նրանց ճակատագրերը խիստ տարբեր են: Քարտերը երիտասարդ տարիքում բասկետբոլիստ է եղել: 1982 թ., երբ Պատակին արդեն որոշակի հաջողությունների էր հասել հանրային կյանքում, Քարտերը մեղադրվեց մի այրի կնոջ սպանության մեջ եւ դատապարտվեց ցմահ բանտարկության: Երեք տարի անց նա արդարացվեց եւ մինչեւ օրս մահապատժի դեմ նահանգում ծավալված պայքարի առաջամարտիկն է:

Նյու Յորքի նահանգի օրենսդիրները մահապատժի ձեւերից նախապատվությունը ի վերջո տվեցին ներարկմանը, որն արդեն կիրառվում է երկրի 22 այլ նահանգներում: Ջորջ Պատակիի կարծիքով, մահապատժի այս ձեւը նվազ դաժան է, քան մյուսները:

1976-1993 թթ. ԱՄՆ-ում մահապատժի է ենթարկվել 226 բանտարկյալ: Այսօր 3000 մահապարտներ բանտերում սպասում են իրենց պատժին: Սպասումը կարող է տեւել տարիներ՝ մինչեւ տարբեր նահանգներում համապատասխան օրինագծերի հաստատումը:

Պ. Ռ.

ՆԱՏՕ

# Վիլլի Կլասը մեղադրվում է կաշառակերության մեջ

Կարո՞ղ է որեւէ մեկը ղեկավարել աշխարհի ամենամեծ ռազմական դաշինքը, երբ նրան կասկածում են կաշառակերության մեջ: Խոսքը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար, բելգիացի Կլասի մասին է, որին վերջերս սկսել են կասկածել տարիներ առաջ զենքի գնման մի խոշոր գործարքի ընթացքում կաշառք վերցրած լինելու մեջ: Բելգիայում արդեն մեկ տարի է, ինչ խոսում են «Ագուստայի» գործի մասին, որի անմիջական մասնակիցներից է եղել ՆԱՏՕ-ի ներկայիս ղեկավարը: Դաշնակից երկրները ԱՄՆ-ի գլխավորությամբ փորձում են նսեմացնել գործի կարեւորությունը, բայց Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում, հարցը մնում է օրակարգում: Le Point հանդեսի հաղորդման համաձայն, մինչեւ օրս միայն Հոլանդիան է բացահայտորեն անվստահություն հայտնել Բելգիայի նախկին արտգործնախարար Կլասին: Նիդեռլանդների պաշտպանության նախարարության ներկայացուցիչն օրերս նույնիսկ հայտարարեց. «Լավ կլիներ, թե Վիլլի Կլասը ժամանակավորապես պաշտոնաթող լիներ, որպեսզի հնարավորության դեպքում կարողանար ապացուցել իր անմեղությունը»:

Մարտի 1-ին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը տասնօրյա այցով մեկնեց ԱՄՆ եւ Կանադա, մասնավորապես հանդիպումներ ունենալով Բիլ Քլինթոնի եւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիի հետ:

Բայց Կլասի այցի նախօրեին նրա կաբինետի նախկին ղեկավար Յոհաննես Դելանգեն մեղադրվեց կաշառակերության մեջ եւ բանտարկվեց: Նա այն վերջին օղակն էր, որից հետո կարելի է մեղադրել հենց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարին: Մանավանդ, որ «Ագուստայի» գործի առթիվ վերջինիս տված խոստովանությունները եւ իրարամերժ բացատրությունները միշտ էլ անհամոզիչ են եղել:



«Ագուստայի» գործն սկիզբ առավ 1988 թ., երբ Բելգիայի թագավորական բանակի համար պետք է գնվեին ֆրանսիական «Էկյուրեյլ» կամ իտալական «Ագուստա» ռազմական ուղղաթիռներ: Դրանք էապես չէին տարբերվում, բայց իտալական ուղղաթիռն ավելի թանկ էր: Բելգիայի այն ժամանակվա սոցիալիստների կառավարության պաշտպանության եւ տնտեսական գործերի նախարարները կարողացան այնպես անել, որ բելգիացիները գնեն 46 «Ագուստա» ուղղաթիռ: L'Express հանդեսի տվյալների համաձայն, գործարքի արժեքը կազմել է 2 միլիարդ ֆրանսիական ֆրանկ, իսկ [illegible] իտալացիների կողմը բռնելու համար բելգիացի սոցիալիստներն ստացել են 9 միլիոն ֆրանկ: Այդ գաղտնիքը կարող էր հավերժական լինել, եթե 1991 թ. խորհրդավոր հանգամանքներում չսպանվեր Բելգիայի սոցկուսի նախկին նախագահ, երկրի նախկին փոխվարչապետ Անդրե Կոոլսը: Սպանության գործը հետաքննող դատավոր Վերոնիկ Անսիոն համոզված է, որ այն կապված է «Ագուստայի» գործի հետ: Կոոլսը չափազանց շատ բան գիտեր ուղղաթիռների գնման գործարքի մասին, որն արդեն իսկ հանգեցրել էր 1988 թ. պաշտպանության նախարար եղած սոցիալիստ փոխվարչապետ Գի Կոեմեի հրաժարականին:

Հետաքննությամբ այսօր կասկածի տակ են առնվել Բելգիայի ֆլամանդացի սոցիալիստները: Կուսակցության նախկին գանձապահը վերջերս վկայել էր, որ 1989 թվականին կայացած մի գաղտնի ժողովում ինքը «Ագուստա» ֆիրմայի կաշառավորության մասին տեղեկացրել է այն ժամանակվա տնտեսության նախարար Վիլլի Կլասին, նախկին ներքին գործերի նախարար Լուի Տոբակին (նա այսօր սոցկուսի նախագահն է) եւ արտգործնախարար, սոցկուսի նախկին նախագահ Ֆրանկ Վանդենբրուկին: Երեքն էլ ի վերջո խոստովանեցին, որ տեղյակ են եղել կաշառակերության առաջարկին, բայց իբր մերժել են այն:

Այս ամենը կարող է խիստ բացասական հետեւանքներ ունենալ Բելգիայի քրիստոնեադեմոկրատ վարչապետ Ժան Լյուկ Դեհանեի համար, որի դաշնակից սոցիալիստները, անկասկած, պարտություն կկրեն մայիսի 21-ին նախատեսված օրենսդրական ընտրություններում: Դա կարող է նաեւ գցել Բելգիայի միջազգային վարկը, որի մայրաքաղաքում են գտնվում ինչպես ՆԱՏՕ-ի կենտրոնակայանը, այնպես էլ Եվրոպական հանձնաժողովը:

Պատրաստեց

ՊԵՏՐՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆԸ

ՆԻԳԵՐԻԱ

## Ձերբակալվել է գանգերի վաճառական

ԼԱԳՈՍ, 20 ՄԱՐՏ, ՌԻԱ ՍՆԱՐՔ: Նիգերիայի Քվարայի նահանգում ձերբակալվել է 70-ամյա մի ծերունի, որը մարդկային գանգեր էր վաճառում: «Դեյլի չեմփիոն» թերթի հաղորդման համաձայն, ոստիկանությունն այդ առեւտրականին հայտնաբերել է հնգամյա մի աղջնակի անհետացման գործը հետաքննելիս: Ծերունու հյուղակի խուզարկության ժամանակ հայտնաբերվել են երեխայի գանգը եւ էլի մի քանի մարդկային գանգեր: Ինչպես պարզել է ոստիկանությունը, ծերունին տեղական հեքիմն էր, որը գանգերն օգտագործում էր իր դեղերի պատրաստման եւ որոշ ծեսերի համար: Նա մարդկային չորացրած գանգերը վաճառում էր նաեւ որպես հուռութներ:

Նմանօրինակ հաղորդումները հազվագյուտ չեն Նիգերիայի մամուլում: Չնայած այն բանին, որ բնակիչների գերակշիռ մեծամասնությունը դավանում է իսլամ կամ քրիստոնեություն, սնահավատությունն ու կախարդությունը շատ ուժեղ են աֆրիկյան այդ ամենամեծ երկրի բնակչության մեջ, որի գրեթե կեսը անգրագետ է:

ԳՆՈՒՄ ԵՆՔ
ֆրանսիական օծանելիքներ եւ հակահոտիչներ (դեզոդորներ):
Հեռախոսներ՝ 527137, 614602:

ԱԶԳ

# Մշակույթ

## «Հայկական զարդանախշեր» օտար բեմերի նոր հրավերներ է ստանում

Հայոց պարը՝ իր առանձնահատկությամբ, բնորոշված կենսախրախությամբ, վարակիչ ռիթմով անտարբեր չի թողել ոչ մի օտար հանդիսատեսի:

Ալես Վարդանյանն իր տիկնոջ՝ Այվարդ Վարդանյանի հետ մեր մշակույթի նվիրյալներից է: Պարել սկսել է վաղ մանկությունից: 5 տարեկան Ալեսի բեմական հաջողությունների մասին հիշողությունները անձնական չեն: Ծնողների պատմելով, փոքրիկ Ալեսին գրկած էին բեմ բարձրացնում, հերթական կրակոտ համարը վերջացնելուց անմիջապես հետո քրտնած մանչուկին սրբիչի մեջ փաթաթած կրկին դուրս հանում բեմից, որ չմրսի: Չէր հասցնում փոխվել, երբ բուռն ծափերը նրան կրկին բեմ էին հրավիրում:

Հետո ավելի հաճախ սկսեց երեւալ օտար բեմերում, սկզբում Մոսկվա, հետո Միության տարբեր հանրապետությունների մայրաքաղաքներ: Յուրաքանչյուր ճանապարհորդություն նոր ոգի էր ավելացնում նրա պարին, յուրաքանչյուր այցելությունից հետո նա ավելի էր հարստանում դիմացինների փորձով:

Համարյա նույն մի ճանապարհ է անցել նաեւ տիկին Այվարդը, երբ 1958-ին հանդիպեցին, ընտանիք կազմեցին, իսկ այնուհետեւ բոլոր բեմահարթակներում, բոլոր համերգներին միասին էին այլեւս:

Հետաքրքիր մի գնահատական կա՝ որտեղ էլ եղել են, որ կոլեկտիվի կազմում, որպես շարքային պարող, պարուսույց, թե խմբի ղեկավար, ամենուրեք այդ կոլեկտիվները հիշատակվել են «Ալեսի խումբ» անունով:

Երիտասարդ մասնագետ ամուսինները իրենց առաջին մանկական պարի խումբը ստեղծել են 1962-ին: Այսօր Ալես Վարդանյանը «Հայկական զարդանախշեր» մանկական պարախմբի գեղարվեստական ղեկավարն է, տիկին Այվարդը նույն խմբի պարուսույցը: Խումբը ստեղծվել է 1983-ին Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնին կից: «Իսկական արվեստագետ դառնալու համար շատ պետք է աշխատել: Պահանջկոտությունը շատ կարեւոր է այստեղ,- ասում է պարոն Վարդանյանը: Սակայն կա մի կարեւոր հանգամանք, որ հաճախ անտեսվում է իմ երիտասարդ գործընկերների կողմից: Խումբը պետք է միաձույլ լինի. խոսքս ռիթմի մասին չէ միայն, հոգու կարիք անհրաժեշտություն է: Մանկան հոգեբանությունն ավելի բազմաշերտ է: Եւ այդ շերտերից յուրաքանչյուրը միայն անմիջականությամբ եւ անկեղծությամբ կարող ես բացել»:

«Տանը չենք վիճում, իսկ այստեղ, ինչքան ասես ստեղծագործական վեճեր կան,- ասում է տիկին Այվարդը: Այդ վեճերում ենք հաճախ գտնում ամենագեղեցիկն ու ճիշտ լուծումը: Մեր մտահոգությունը մեկն է՝ 400 մանուկ պարողների ճաշակը կրթել, որ շատ պատասխանատու բան է»: «Հայկական զարդանախշեր» մասնակցել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմակերպված մանկական ամենատարբեր միջազգային փառատոների (1989-ին Իտալիա, Հունգարիա, 1990-ին Հյուսիսային Ամերիկա, Կանադա) եւ արժանացել առաջին կարգի վկայագրերի: 1994-ին մասնակցել է «Բրավո Հայաստան» փառատոնին եւ այնտեղ էլ հինգ հրավերներ ստացել Ֆրանսիայից, Կիպրոսից, Ամերիկայից:

Պատահական չէ, որ խումբը «Հայկական զարդանախշեր» անունն է կրում: Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի տնօրեն Հենրիկ Իգիթյանի մեկնաբանմամբ, հայ մանուկների պարը ներառելով աշխարհի տարբեր երկրների ու տարբեր ժողովուրդների պարային լավագույն ռիթմերն ու պլաստիկան, այնուհանդերձ խիստ բնորոշված ուղղվածություն պետք է հանդես բերի: Յուրաքանչյուր պար, իրոք, գունեղ մի զարդանախշ պիտի լինի, որ մի-սի փոխանցվի հաջորդ սերունդներին:

ՎԱՐԴԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

## 1700-ականների Վենետիկը՝ Նոր աշխարհում

### Մեծ վարպետների նկարների ցուցահանդեսի բացումը ԱՄՆ-ում

«Սա իր տեսակի մեջ առաջին ցուցահանդեսն է ԱՄՆ-ում», խոստովանում է ԱՄՆ-ի Արվեստի ազգային պատկերասրահի վարիչ Էնդրու Ռոբինսոնը խոսելով այնտեղ օրերս բացված վենետիկյան 1700 թվականների վարպետների անգնահատելի կտավների ցուցադրության մասին: «18-րդ դարում Վենետիկը աշխարհի գունային հարստության արտացոլումն է եղել, բաց մանուշակագույնի, մեղմ կապույտի, բաց դեղինի, սպիտակի եւ փղոսկրագույնի յուրահատուկ մի զուգորդում», ասում է նա ավելացնելով, որ Վենետիկը ներկայացվում է որպես հազար տարիների պատմության ժառանգորդ մի հոգեւոր քաղաքի, որը արեւմտյան Եվրոպայի եւ Արեւելքի միջեւ տարանցիկ առեւտրի կենտրոնից դառնում է անկախ, հարուստ եւ գեղեցկության պետություն Ադրիատիկ ծովում եւ որը նույնիսկ 18-րդ դարի վերջում իր անկախությունը կորցնելուց հետո էլ Վերածննդի արվեստի ավանդույթները պահպանում է ավելի երկար ժամանակ, քան Իտալիայի որեւէ այլ շրջան:

Օտարերկրացիների կողմից բաժան-բաժան եղած Վենետիկը հավատարիմ է մնում իր ինքնությանը ստեղծելով մեղմիկ, քնարական եւ թափանցիկ գունավոր բնանկարներ: Գեղանկարչության եւ ոճերի բացառիկ բազմազանությունը եւ գունահարաբերությունների բարդությունն ու նրբությունը առավել ցայտուն են այդ շրջանում, երբ ստեղծվել են Ջովաննի Բատիստա Տիեպոլոյի բարոկկոյի եւ ռոկոկոյի տարրերով ալեգորիկ մոնումենտալ-դեկորատիվ գեղանկարչությունը, Ջովաննի Բատիստա Պյացետտայի բանաստեղծականությամբ լի ու Պիետրո Լոնգիի բեմերի ծաղրանքով ներկայացված ժանրային գործերը:



Տիեպոլո. «Երկու սուրբ»

Այդ շրջանի Վենետիկում են ծավալվում նաեւ քաղաքական եւ հասարակական շատ գաղափարներ, որոնք այսօր ընկած են ինչպես Անգլիայի, այնպես էլ մյուս զարգացած երկրների ժողովրդավարական սկզբունքների հիմքում:

Էնդրու Ռոբինսոնը երեք տարի է նվիրել այս ցուցահանդեսի պատրաստմանը, հաղորդում է «Թեհրան թայմզ ինտերնեշնլ» շաբաթաթերթը իր փետրվարի 23-ի համարում: Նա Պյացետտային եւ Տիեպոլոյին համարում է այդ շրջանի գլխավոր «հերոսները», եւ վերջինից 42 նկար է ընդգրկել ցուցահանդեսում, որտեղ մեծ տեղ է հատկացված Կանալետտոյի՝ Ջովաննի Անտոնիո Կանալի վրձնած վենետիկյան տեսարաններին, Պյացետտայի սրբերի նկարներին եւ հայտնի անձնավորությունների դիմանկարներին, որոնք մեծապես գնահատվելով Անգլիայի արքա Գեորգ III-ի կողմից գնվել եւ երկար ժամանակ կախված են եղել Բեկինգհեմյան պալատի դահլիճների պատերից: Պյացետտայի լավագույն գործերից է, ըստ Ռոբինսոնի, իրենից մեկ տարով մեծ նկարիչ Ջուլիա Լամայի դիմանկարը, որը պատկերված է որպես իր արվեստով տարված նկարչի այլաբանություն: «Հավանական է, որ նրանք շատ մտերիմ են եղել», գրված է ցուցահանդեսի կատալոգում:

ԱՄՆ-ի Ազգային պատկերասրահի 16 սենյակներում ընդհանուր առմամբ ներկայացված են 241 կտավներ տրամադրված մոտ հարյուր կազմակերպությունների եւ անհատների կողմից, որոնցից հիշատակության է արժանի Անգլիայի Էլիզաբեթ II թագուհին:

Ըստ «Թեհրան թայմզի», նման հավաքածու մինչեւ հիմա ոչ մի այլ տեղ չի ցուցադրվել:

Ն. Ծ.

ՖՐԱՆՍԻԱ

## Հայաստանի արհեստավորների ցուցահանդես Մարսելի կենտրոնում

Հունվարի 20-ից մինչեւ մարտի 18-ը, Մարսելի կենտրոնում բացվել է «Հայաստանի արհեստավորներ, շինանյութ եւ ավանդություն» վերնագրով մի ցուցահանդես, որտեղ ցուցադրվել են Հայաստանի վարպետ արհեստավորների ստեղծագործություններ, տեղեկացնում է «Յառաջը»՝ իր փետրվարյան համարներից մեկում: Ցուցասրահների ներքին հարդարանքը արհեստանոցի մթնոլորտ է ստեղծել: Ցուցահանդեսի գաղափարը հղացել է Մարսելի Հայ մշակույթի տունը: Բացման հանդիսությանը հրավիրված են եղել Անրի Վերնոյը եւ Վահան Տեր-Ղեւոնդյանը:

Ներկայացված ցուցանմուշները (քիչ բացառությամբ) ընտրված են Հայաստանից, լավագույն արհեստավորների աշխատանքներից, հավաքածուներից: Հատուկ տեղ են գրավում ոսկերչությունը, գորգերն ու կարպետները, փայտի գեղարվեստական փորագրությունը, խեցեգործությունը, ասեղնագործությունը: Ցուցադրված են նաեւ երաժշտական ավանդական գործիքներ:

Թերթում նշված են մի քանի անուններ՝ Լեւոն Լալայան (ոսկերիչ-արծաթագործ), Լենա (ասեղնագործուհի), Լիլիթ Գրիգորյան, Ռոբեր ու Նաեւ Սիմոն (խեցեգործ):

ՀԱՄԱՌՈՏ

## Կոմիտասի 125-ամյակը Պլովդիվում

Փետրվարի 18-ին Պլովդիվի Հայ մշակույթի տան սրահում նշվել է Կոմիտաս վարդապետի ծննդյան 125-ամյակը: Հանդիսությունն իրագործել է «Վիկտորյա եւ Գրիգոր Թյությունջյան» հայկական վարժարանի տնօրենությունը եւ «Համազգային» կրթական ու մշակութային միությունը, տեղեկացնում է Փարիզի «Յառաջ» օրաթերթը, մարտի 9-ի համարում:

## Էգոյանի «Օրացույցը» ցուցադրվելու է Փարիզում

Մարտի 22-ին Փարիզի «Ախիոն Քրիսթին» սրահում ցուցադրվելու է Ատոմ Էգոյանի «Օրացույց» ֆիլմը, տեղեկացնում է «Յառաջ» օրաթերթը, մարտի 15-ի համարում («Ազգն» արդեն գրել է, որ Էգոյանի այս ֆիլմի ցուցադրությամբ մարտի վերջին կբացվի Երեւանի «Պիոներ» կինոթատրոնը): Թերթը գրում է, որ ֆիլմը մեծապես տպավորել է, երբ 1993-ի հունիս-հոկտեմբերին ցուցադրվել է Փարիզի Պոմպիդու մշակույթի կենտրոնում եւ հեռուստացուցադրման ժամանակ: 1993-ին ստեղծված «Օրացույց» ֆիլմը Բեռլինի Նոր շարժանկարներ ֆորումին արժանացել է լավագույն ժապավենի մրցանակի: Ֆիլմի գլխավոր հերոսուհու դերը մարմնավորում է Ատոմի կինը՝ դերասանուհի Արսինե Խանջյանը: Ֆիլմը նկարահանվել է Հայաստանում: «Օրացույցով» ուզեցի հայկական գիտակցության երեք մակարդակների՝ ազգ, Սփյուռք եւ ձուլում, հետ շփում հաստատել», բնորոշել է Էգոյանը եւ շարունակել, թե այն 3 անձերի սիրո պատմություն է, որոնք իրար կորցնում ու վերագտնում են:

ԿԱՊԵՐ

## Ճապոնական տիկնիկների ցուցահանդես Խաբարովսկում

ԽԱԲԱՐՈՎՍԿ, 19 ՄԱՐՏ, ՌԻԱ-ՄՆԱՐՔ: Ուրբաթ օր Խաբարովսկի Գեղարվեստի հեռավորարեւելյան թանգարանում բացվեց «Ճապոնական ավանդական տիկնիկներ» ցուցահանդեսը: Այնտեղ ներկայացված հավաքածուն տրամադրել է Ճապոնիայի գլխավոր հյուպատոսարանը: Ցուցադրված 80 տիկնիկները հիշատակում են Ճապոնիայի մշակութային հարուստ ավանդույթների: Ցուցահանդեսը կտեւի մինչեւ ապրիլի 2-ը:

«Գլխավոր հյուպատոսարանի բացումից հետո Խաբարովսկում նկատվում է ճապոնական մշակույթին եւ արվեստին նվիրված միջոցառումների առատություն», ՌԻԱ-ի թղթակցին ասաց երկրամասի վարչակազմի մշակույթի եւ արվեստի կոմիտեի նախագահ Ալեքսանդր Բոչարնիկովը: Նա պատմեց, որ քաղաքում իրար հաջորդել են ճապոնական գեղանկարչության ու գծանկարչության չորս ցուցահանդեսներ, անցկացվել է ճապոնական եւ ռուսական ֆիլմերի փառատոն, իսկ ճապոնական կենտրոնը եւ տեղական հեռուստատեսությունը սկսել են ճապոներենի դասեր անցկացնել:



Շարակու. 18-րդ դար

ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

## Ինքնահաստատում ամբողջ կյանքում

### Օրերս լրացավ գերմանացի նկարիչ Մաքս Բեկմանի ծննդյան 111-ամյակը

(1884-1950): Սեւ, «կոշտ» ուրվագծերը զանազանում են նրա գեղանկարչական աշխարհն իր ժամանակակիցների ստեղծածից: Բեկմանի ստեղծագործությունները պատկերում են պատերազմի, տանջանքի ու բռնության իշխանության տակ ապրող հասարակությունը: 1930-1950-ին ընկած ժամանակահատվածում ստեղծված ինը եռանկարները նկարագրում են նկարչի մանկությունից մինչեւ պանդխտություն ձգվող կյանքը՝ միֆական արտահայտչաձեւի մեջ: Այդ տարիներին Բեկմանը թափառում էր Մայնի Ֆրանկֆուրտում, Ամստերդամում, Սենտ Լուիսում, Նյու Յորքում: 1925-ից սկսյալ, մինչեւ նացիստների կողմից նրան աշխատանքից ազատելը, ղեկավարել է Մայնի Ֆրանկֆուրտի Շտեդելի արվեստի ինստիտուտը: Դեռ Գյոթեի ժամանակներից Մայնի Ֆրանկֆուրտը կարեւորագույն մշակութային կենտրոն էր, եւ յուրաքանչյուր այստեղ գտնված արվեստագետ ինչ-որ բան այդ մթնոլորտից դնում էր իր արվեստում:



«Իմ ողջ կյանքում փորձել եմ ինքս ինձ վերագտնելով հաստատել», ասել է գերմանացի նկարիչ Մաքս Բեկմանը

ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

# Արմեն Շահգելդյանի հեթ-տրիկը

**ՍԱՐԳԻՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Նախօրեին 2-րդ տուրի հանդիպումները ավարտեցին նաեւ ՀՀ բարձրագույն խմբի 4-րդ առաջնության 2-րդ ենթախմբի թիմերը: «Բանանցն» ու «Արարատը» իրենց հարաբերությունները պարզեցին Արտաշատում: Գրանցվեց ոչ ֆուտբոլային հաշիվ: «Արարատը» հաղթեց 8-0 հաշվով: Դա ավելի շատ ոչ թե «Արարատի» հզորության մասին է վկայում, այլ այն, որ «Բանանցն» այլեւս նախկին ուժը չունի: Մեր հանրապետության առաջատար թիմերից մեկը, [illegible], կարճ ժամանակում, կարելի է ասել, փլվեց: «Արարատի» կազմում կրկին աչքի ընկավ Արմեն Շահգելդյանը, որը 3 անգամ գրավեց մրցակցի դարպասը: Հիշեցնենք, որ ՀՄԸՄ-ի հետ գավաթի եւ առաջնության նախորդ 2 հանդիպումներում նույնպես Շահգելդյանը մեկական, այն էլ վճռական գոլերի հեղինակ է դարձել: Սա էլ իր հերթին վկայում է, որ տաղանդավոր ֆուտբոլիստն ընթացիկ մրցաշրջանում ամենայն լրջությամբ է տրամադրված: Նախորդ մրցաշրջանի վերջնամասը նրա համար հաջող չստացվեց: Ոտնակոխվելով, Արմեն Շահգելդյանը ոչ միայն շատ հրաժեշտ տվեց առաջնությանն, այլեւ ազգային հավաքականին: Իսկ ընթացիկ մրցաշրջանում լուրջ փորձություններ են սպասում հանրապետության գլխավոր թիմին եւ Շահգելդյանն էլ դեռ է ձգտի իր արժանի տեղն ունենալ հավաքականում: «Արարատից» 2 գոլի հեղինակ դարձավ Վահե Յաղմուրյանը: Մեկական գնդակ խփեցին Տիգրան Գոնջյանը, Լեւոն Ստեփանյանը եւ Հակոբ Տեր-Պետրոսյանը:

Կարելի է ասել անակնկալ էլ ունեցավ ՀՄԸՄ-«Կոտայք» հանդիպումը: Ինչ խոսք, շատերն սպասում էին, որ անհամեմատ ուժեղ կազմ ունեցող հանրապետության փոխչեմպիոնը հեշտությամբ առավելության կհասնի երիտասարդ կազմ ունեցող «Կոտայքի» նկատմամբ: Սակայն արձանագրվեց ոչ-ոքի՝ 0-0:

Գյումրիում իր առաջին հանդիպումն անցկացրեց բարձրագույն խմբի նորեկը «Արագածը», որը հյուրընկալեց Երեւանի «Վանին»: Չնայած 1-ին տուրում 0-10 հաշվով ՀՄԸՄ-ից կրած անողոք պարտությանը, «Արագածը» կարճ ժամանակում կարողացավ ուշքի գալ եւ այս անգամ հաղթել մրցակցին 4-2 հաշվով:

Այսօր սկսվում է 3-րդ տուրը: Առաջինը մրցապայքարի մեջ կմտնեն 1-ին ենթախմբի թիմերը: Ժամը 15-ին Արարատում ուժերը չափելու են «Ցեմենտն» ու հանրապետության չեմպիոն Գյումրիի «Շիրակը»: Երկու թիմերն էլ 1-ին երկու տուրում խոշոր հաշվով հաղթանակներ են տարել եւ նրանց մրցամենն այսօր մեծ հետաքրքրություն է առաջացնում:

**Մարտի 24-ին կմրցեն**
**ՅՄՄ-«Զանգեզուր»**
**«Ազնավուր»-«Երազանք»**

**ՀՀ բարձրագույն խմբի**
**4-րդ առաջնության**
**մրցաշարային աղյուսակները**
**մարտի 21-ի դրությամբ**

**1-ին ենթախումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շիրակ | 2 | 2 | 0 | 0 | 10-1 | 4 |
| 2. Ցեմենտ | 2 | 2 | 0 | 0 | 6-0 | 4 |
| 3. Ազնավուր | 2 | 1 | 0 | 1 | 2-4 | 2 |
| 4. ՅՄՄ | 2 | 1 | 0 | 1 | 1-4 | 2 |
| 5. Երազանք | 2 | 0 | 0 | 2 | 0-4 | 0 |
| 6. Զանգեզուր | 2 | 0 | 0 | 2 | 2-8 | 0 |

**2-րդ ենթախումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Արարատ | 2 | 2 | 0 | 0 | 9-0 | 4 |
| 2. ՀՄԸՄ | 2 | 1 | 1 | 0 | 10-0 | 3 |
| 3. Կոտայք | 2 | 1 | 1 | 0 | 4-1 | 3 |
| 4. Արագած | 2 | 1 | 0 | 1 | 4-12 | 2 |
| 5. Վան | 2 | 0 | 0 | 2 | 2-5 | 0 |
| 6. Բանանց | 2 | 0 | 0 | 2 | 1-12 | 0 |

ՇԱԽՄԱՏ

# Ինչպես խաղաց, այնպես էլ ավարտեց

Լինարեսի եզրափակիչ տուրը եւս, ամբողջ մրցաշարի նման, անհաջող էր Վլադիմիր Հակոբյանի համար: Նա պարտություն կրեց առաջատարից՝ Իվանչուկից, եւ միանձնյա մնաց վերջին տեղում:

Օրվա մյուս հանդիպումները՝ Կարպով-Իլեսկաս, Սոկոլով-Խալիֆման, Շորթ-Լոթյե, Տիվյակով-Թոփալով, Դրեեւ-Բելյավսկի, Շիրով-Լյուբոեւիչ, ավարտվեցին խաղաղ արդյունքով:

Մրցաշարի վերջնական արդյունքները այսպիսին են. Իվանչուկ՝ 13 հնարավորից 10 միավոր, Կարպով՝ 9, Թոփալով, Շիրով՝ 8-ական, Խալիֆման՝ 7,5, Բելյավսկի՝ 7, Տիվյակով, Իլեսկաս՝ 6-ական, Դրեեւ, Սոկոլով՝ 5,5-ական, Լյուբոեւիչ, Շորթ՝ 5-ական, Լոթյե՝ 4,5, Հակոբյան՝ 4 միավոր:

Իսկ իսպանական մեկ այլ քաղաքում՝ Լաս Պալմասում շարունակվող աշխարհի չեմպիոնի կոչման հավակնորդների մրցախաղում ոչ-ոքիների երկարատեւ շարանից հետո Անանդը 9-րդ պարտիայում հաղթեց Կամսկուն, եւ այժմ առջեւում է 5-4 հաշվով:

Մինչեւ մենամարտի ավարտը մնացել է երեք պարտիա:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# Գրիգոր Գրիգորյանը շարունակում է հաղթարշավը

Բուլղարահայ բռնցքամարտիկ Գրիգոր Գրիգորյանը, որը 2 տարի է, ինչ հաստատվել է Ֆրանսիայում, անցնելով պրոֆեսիոնալ բռնցքամարտ շարունակում է իր հաղթարշավը: Վերջերս հայազգի բռնցքամարտիկը Մարսելի մոտակայքում գտնվող Վիտրոլ փոքրիկ քաղաքում միավորներով 6 ռաունդանոց մենամարտում հաղթեց կոլումբիացի Կի Բերնալին:

Գրիգոր Գրիգորյանը Ֆրանսիայում կազմակերպված բոլոր մենամարտերում առավելության է հասել իր մրցակիցների նկատմամբ: Նրա հանդիպումները պրոֆեսիոնալ ռինգում միշտ կազմակերպում է իր առաջին հովանավորը՝ Ֆաբրիս Տիոզզոն, որը նույնպես բռնցքամարտիկ է, եւ որի եղբայրը՝ Քրիստոֆ Տիոզոն եղել է Եվրոպայի չեմպիոն: Նույն Վիտրոլ քաղաքում ռինգ դուրս եկավ նաեւ Ֆաբրիս Տիոզզոն, որը 4-րդ ռաունդում հաղթելով խաղացողի Նոել Մագիին, նվաճեց պրոֆեսիոնալ բռնցքամարտի կիսածանր քաշի Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը:

ԴԱՏԱԿԱՆ

# ԱՄՆ-ի գեղասահորդուհիները հանցագործնե՞ր

մերիկացի գրեթե յուրաքանչյուր գեղասահորդուհի խնդիրներ է ունենում ատասխանատվության հետ: Սա արդեն ուրջ հարց է դարձել: Տոնյա Հարդինգի Նենսի Քերիգանի աղմկոտ սկանդալից հետո այս անգամ «աչքի ընկավ» Նիկոլ Բոբեկ անունով 17-ամյա իկուհեր մի գեղեցկուհի, որին ԱՄՆ-ի եղասահի ֆեդերացիան գործուղել Բիրմինգհեմ, երկրի մարզական պատիվը պաշտպանելու աշխարհի առաջնությունում: Վերջինս իր վարքագծով ետ չմնաց Տոնյա Հարդինգից: Նրանց ասմունքները իրար շատ նման են: Նիկոլ Բոբեկը ձերբակալվել է անության կողմից: Պարզվել է, որ նա գողություն է արել գեղասահի իր ընկերուհիներից մեկի տանը, որը միաժամանակ նրա գլխավոր մրցակիցն է հավաքականում: Երկուսն էլ Դետրոյթի նույն ակումբի անդամներ են: Ըստ ոստիկանության, Նիկոլ Բոբեկը ինչ-որ բան էր փնտրում մրցակցի տանը: Հանցանքի վայրում նրան բռնեցին ոստիկանները: Մինչեւ դատավարությունը Նիկոլ Բոբեկին արտոնվել էր մասնակցել Բիրմինգհեմի աշխարհի առաջնությանը: Այնտեղ նա բավականին հաջող հանդես եկավ, սակայն ԱՄՆ-ի գեղասահի ֆեդերացիան մինչեւ վերջ դատապարտված է իսկապես հանցավոր մարզուհիներ ունենալ:

ԽՃԱՆԿԱՐ

## «Սքոտները երբեք կանանց չեն ծեծել...»

Ամերիկացի հանրահայտ գեղասահորդուհի Տոնյա Հարդինգի նախկին ամուսին Ջեֆ Ջիլուլին ուզում էր փոխել իր ազգանունը: Այդ առթիվ նա դիմել էր կառավարությանը եւ մտադիր էր կրել Սքոտ ազգանունը: Դա մեծ դժգոհություն առաջացրեց ամերիկացի մի քաղաքացու մոտ, որը կրում էր հենց Ջեֆ Սքոտ անունը: Վերջինս Սան Դիեգոյից 80 կմ դեպի հյուսիս գտնվող Տեմեկուլա քաղաքի քաղաքապետն է: Նա հայտարարեց. «Սքոտները երբեք կանանց չեն ծեծել», հիշեցնելով Ջեֆ Ջիլուլիի եւ նրա ընկերոջ կողմից հարձակումն ամերիկացի նշանավոր գեղասահորդուհի Նենսի Քերիգանի վրա, որը կազմակերպել էր Տոնյա Հարդինգը (այդ սկանդալի մասին «Ազգը» բազմիցս գրել է):

## Ամենամարզասեր Եւրոպան

Պարզվում է, որ աշխարհում ամենամարզասերը հին աշխարհամասն է: Վիճակագրությունը փաստում է, որ եւրոպական համայնքի շուրջ 320 միլիոն բնակչությունից 100 միլիոնը զբաղվում է որեւէ մարզաձեւով:

## Կատարինա Վիտը դժգոհ է իր սեփական կյանքից

«Հավանաբար նույնիսկ որեւէ մայրապետ (կղերական) ավելի լավ սեքսուալ կյանք ունի, քան ես: Դեռ փնտրած մարդս չեմ գտել», հայտարարել է գերմանացի անվանի գեղասահորդուհի, գեղեցկուհի Կատարինա Վիտը: Հասկանալի պատճառներով մեր ընթերցողների համար ուզում ենք գաղտնի պահել Կատարինա Վիտի հեռախոսահամարները, որպեսզի զոհ չգնան այս «մարդակերին» (Կատարինա Վիտը մի քանի տասնյակ սիրահարներ է ունեցել):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Կազմակերպությանն
անհրաժեշտ է գլխավոր
հաշվապահ: Դիմեն մինչեւ
40 տարեկան, աշխատանքի
փորձ ունեցող կանայք:
Հասցեն՝ Արշակունյաց պ.
2, առաջին հարկ:
Հեռ. 56-58-22

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

# Ատլանտա-96-ի տարբերանշանը Հայաստանի գույներով

ալիք տարի ԱՄՆ-ի Ատլանտա քաղաքում կայանալիք օլիմպիական աղերը կհամընկնեն ժամանակաից օլիմպիական շարժման 100-րդ արեդարձին: Սկզբնական այդ մրումները դարեր շարունակ չկայաալով վերսկսվեցին 1896 թվականին Աթենքում կազմակերպված աղերով, որոնք կազմակերպեցին րանսիացի Պիեռ դե Կուբերտենը հույն միլիոնատեր ֆինանսիստ Ջորջ Ավերոֆը: 1996 թ. օլիմպիաան խաղերի տարբերանշանն արեն պատրաստ է եւ ներկայացնում կարմիր, կապույտ եւ նարնջագույն լիմպիական ջահը: Սա Հայաստաի հաջողությունը գուշակող արեհաջող իմաստ ունի: Լոգոյի րա կին նկարիչ Ամերիկան խորհրանիշը ասցեն:



ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

# Իսրայելի լավագույն մրցավարն արաբ

**ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐՋԱՅԱՆ**
Վալանս, Ֆրանսիա

Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ իսրայելցիներն ու արաբները լինելով ցեղակիցներ (սեմիտներ), միաժամանակ իրար թշնամի են: Բայց ձեզ զարմանալի կթվա, երբ իմանաք, որ Իսրայելի ֆուտբոլի լավագույն մրցավարը արաբ է, ավելի զարմանալի՝ որ նա մուսուլման չէ, այլ քրիստոնյա, այն էլ՝ կաթոլիկ: Այս զարմանալի «ռեկորդակիրը» Սուհիել Դավուդն է, որը վերջերս ճանաչվեց Իսրայելի ֆուտբոլի առաջնությունների լավագույն մրցավարը: «Ինչ խոսք, ինձ համար շատ դժվար է մրցավար լինել Իսրայելում: Ես շատ անգամ վիրավորանքներ ու հայհոյանքներ եմ լսում իսրայելցի մարզասերների կողմից հանդեպ ազգությանս (արաբներին), այնպիսի հայհոյանքներ, ինչպես «կեղտոտ արաբ», «արաֆաթ» եւ այլն: Բնականաբար, անհարմար մրցավարներին հայհոյում են: Եւ կարեւոր չէ արաբ կամ հրեա լինելը, բայց շատ կարեւոր է լավ մրցավար լինելը», ասում է Սուհիել Դավուդը: «Ժողովուրդը հաճախ մարզադաշտ է գալիս նյարդերը հանգստացնելու համար, եւ որպես կանոն, իր թույնն առաջին հերթին թափում է մրցավարների վրա: Օրինակ, հրեա մրցավարներին Իսրայելում շատերն անվանում են նացիստ» ավելացնում է Դավուդը: Նա մարմնամարզության պրոֆեսոր է (ուսուցիչ) Հայֆայի մոտակայքում գտնվող իր Կաֆր Յասսիֆ գյուղում: Այս արաբ մրցավարը պատրաստվում է դառնալ կաթոլիկ եկեղեցական (վարդապետ), եւ դրա համար աստվածաբանություն է ուսումնասիրում: Նրա պապերը 150 տարի առաջ եկել են Սիրիայից, հաստատվելով վերոհիշյալ գյուղում: 15 միլիոն բնակչություն ունեցող Սիրիայում հիմա կան 2,5 միլիոն քրիստոնյաներ: «Դավուդը չի՞ վախենում»: Այս հարցին նա պատասխանում է. «Երկու ամիս առաջ Թել Ավիվի մոտերքում մի խաղ էի վարում, եւ այն էլ Թել Ավիվի Դիզենգոֆի պայթյունի հաջորդ օրը, երբ տասնյակ իսրայելցիներ էին մահացել: Շատ էի վախենում, որ ի նշան բողոքի, ժողովուրդը հարձակվի ինձ վրա: Բարեբախտաբար ոչինչ չպատահեց: Ես ֆուտբոլ շատ եմ սիրում: Հետեւաբար սիրում եմ նաեւ նրա շուրջ գտնվող բոլոր անձանց խաղացողներին ու մարզասերներին», ասում է արաբ մրցավարը, որը չի կարող բաժանվել ֆուտբոլից ազգերի թշնամության պատճառով: Սուհիել Դավուդը երկրպագում է անգլիացի մրցավար Ջեկ Թեյլորին, որը վարեց 1974 թ. աշխարհի առաջնության Գերմանիա-Հոլանդիա եզրափակիչ հանդիպումը եւ համարձակությունն ունեցավ առաջին իսկ րոպեին 11 մետրանոց հարված նշանակել դարպասի տերերի՝ գերմանացի ֆուտբոլիստների դարպասին: Նա երազում է մի օր վարել եվրոպական միջազգային պաշտոնական որեւէ խաղ: Չէ՞ որ Իսրայելն էլ ՈՒԵՖԱ-ի անդամ է:

*Բաժինը վարում է*
*ՍԱՐԳԻՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ*

## ՄԱՀԱԶԴ

Կարճատեւ հիվանդությունից հետո կյանքից հեռացավ Հայաստանի վաստակավոր ուսուցիչ, ՀՀ լուսավորության նախկին նախարար, պրոֆտեխկրթության պետական կոմիտեի նախագահ **Սուրեն Աղասու Միքայելյանը**:

Հանգուցյալի թաղումը կատարվեց մարտի 19-ին, հարազատների եւ նախկին գործակիցների մասնակցությամբ:

«Ազգը» իր ցավակցություններն է հայտնում հայտնի մանկավարժի հարազատներին, մանավանդ նրա կողակցին՝ տիկ. Ռոզիկ Միքայելյանին:

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

*Չորս սենյականոց տուն տնամերձ հողամասով (200 քմ) եւ օժանդակ կառույցներով:*
*Հասցեն՝ Քանաքեռ, Կամոյի փող., 1 նրբանցք թիվ 2 (անմիջապես Քանաքեռի սկիզբը),*
*Հեռ.՝ 285873*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
## AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

**Ճարտարագիտության, գործարարության, քաղաքագիտության մագիստրոսի կոչումներ**

Հայաստանի Ամերիկյան Համալսարանը սկսում է 1995-1996 ուսումնական տարվա դիմորդների փաստաթղթերի ընդունումը:

Ընդունելությունը կազմակերպվում է արդյունաբերական ճարտարագիտություն, սեյսմիկ ճարտարագիտություն, գործարար ղեկավարում եւ քաղաքագիտություն մասնագիտությունների գծով:

Դիմորդները պետք է ունենան համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն՝ մաթեմատիկա, տնտեսագիտություն, ճարտարագիտություն MBA **աստիճանի համար**. քաղաքացիական շինարարություն կամ մեխանիկա **սեյսմիկ ճարտարագիտության** M.Eng. աստիճանի համար. ճարտարագիտություն, մաթեմատիկա, մեխանիկա **արդյունաբերական ճարտարագիտության** M. Eng. աստիճանի համար. պատմություն, իրավագիտություն, լեզուներ կամ հասարակական գիտությունների այլ բնագավառներ **քաղաքագիտության** MA աստիճանի համար:

**Անգլերեն լեզվի իմացությունը պարտադիր է:**

**Դիմորդները պետք է ներկայացնեն**

- Դիպլոմի եւ ներդիրի օրինակներ՝ իրենց պատճեններով
- Երեք բնութագիր նամակ, տեղում լրացնեն դիմումնագիր եւ ֆինանսական հնարավորությունների մասին տեղեկանք:

Փաստաթղթերի ընդունման համար կանխավճարը դրամով կազմում է ԱՄՆ 5 դոլարին համարժեք գումար, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետը 1995 թ. ապրիլի 28-ն է:

Դիմորդները 1995 թ. մայիսին կհանձնեն անգլերեն լեզվի կարգավորիչ քննություն:

Հիմնական ծրագրում վերջնական ընդունելությունը կկատարվի դիպլոմի ներդիրի միջին գնահատականի, նախապատրաստական փուլում դիմորդների հաջողությունների եւ տվյալ ծրագրի համար անհրաժեշտ բնագավառի քննական արդյունքների հիման վրա (GMAT կամ GRE):

Ուսման տեւողությունը հիմնական ծրագրի համար երկու տարի է:

*Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀԱՀ-ի Ընդունելության գրասենյակ: Հասցե՝ Մարշալ Բաղրամյան 40, առաջին հարկ, 19 սենյակ, հեռախոս 27-10-85:*

ՀԱՀ-ը ռասայական, կրոնական, սեռական կամ ազգային խտրականություն չի ճանաչում

## ԵՎԱ

***«ԵՎԱ» ուսումնական կենտրոնը հրավիրում է Ձեզ 15-25-ամյա դասընթացների հետեւյալ մասնագիտությունների գծով***

- Համակարգչային ուսուցում IBM PC համակարգիչների վրա՝ հետեւյալ բաժիններում
  - օպերացիոն համակարգով գործ (MS DOS, NORTON, WINDOWS, տեքստային եւ գրաֆիկական խմբագրիչներ)
  - տվյալների բազաներ
  - ծրագրավորման լեզուներ
- անգլերեն լեզու
- բանկային գործ եւ համակարգիչների կիրառումը բանկերում
- հաշվապահության եւ համակարգիչների կիրառումը հաշվապահության մեջ
- կոսմետիկա եւ էպիլյացիա
- մերսում (մասսաժ)

*Ավարտողներին տրվում են վկայականներ (սերտիֆիկատ) հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով:*
*Ընդունելությունը՝ ամեն օր, ժ. 13.00-ից 16.00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:*

***Հասցեն՝ Սարյան 4 (Մ. Սարյանի տուն-թանգարանի դիմաց)***
***Հեռ. 58-21-22 (ժ. 13.00-ից 16.00-ը) եւ 58-58-71 (շուրջօրյա):***

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Երկու առանձնատուն,
250 քմ ընդհանուր
տնամերձ հողամասով
«Զվարթնոց»
կինոթատրոնի մոտակայքում:

Զանգահարել 58-33-26, 25-25-38

Հայաստանի Հանրապետություն
Հայկական միջմասնագիտական
խմբավորում՝ GIA (Ֆրանսիա)
Հայաստանի ներկայացուցչություն

## Հրավիրում ենք աշխատանքի

- Ֆրանսերենին, հայերենին եւ ռուսերենին կատարելապես տիրապետող թարգմանիչ (գրավոր եւ բանավոր):
- Համակարգչին տիրապետող մասնագետ՝ տեքստային եւ գրաֆիկական խմբագրերի (WORD, EXCEL ծրագրերի եւ ֆրանսերենի իմացությամբ):

**Դիմել GIA-ի գրասենյակ՝ ինքնակենսագրությամբ (CV), ամեն օր, ժամը 18.00-19.00 (բացի շաբաթ եւ կիրակի օրերից):**

**Հասցեն՝ Երեւան-19, Մարշալ Բաղրամյան 17, ճարտարապետի տուն: Հեռ. 58 74 40,**



SARTARABAD Co. LTD

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՍՊԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է

ԵՐԵՎԱՆ-ԲԵՅՐՈՒԹ

ՈՒՂԻՂ ՉՎԵՐԹՈՎ

7 ՕՐՎԱ ԳՐԱՎԻՉ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ

*1 աստղանի հյուրանոց, էքսկուրսիաներ Լիբանանի տեսարժան վայրեր, [illegible]*

14 ՕՐՎԱ ԳՐԱՎԻՉ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ

*3 աստղանի հյուրանոց*

**Անհատական վիզաների եւ այլ փաստաթղթերի ձեւակերպում եւ հաստատում Մոսկվայում:**

A STYLE

«ԷՐԵԲՈՒՆԻ» հյուրանոց, 2-րդ մասնաշենք, 327 սենյակ: Հեռ. 565575

## Շախմատային օլիմպիադայի խորհրդանշանի եւ ազդականշի մրցույթ

*Շախմատի 32-րդ համաշխարհային օլիմպիադայի եւ ՖԻԴԵ-ի 67-րդ կոնգրեսի կազմակերպական կոմիտեն հայտարարում է մրցույթ՝ Երեւանում 1996 թ. անցկացվելիք համաշխարհային օլիմպիադայի եւ կոնգրեսի խորհրդանշանի (էմբլեմի) եւ երաժշտական ազդականշի ստեղծման համար:*

*Մրցույթում լավագույնը ճանաչված խորհրդանշանի եւ ազդականշի հեղինակների համար սահմանվում է 1-ական մրցանակ՝ 300 ամերիկյան դոլարին համարժեք դրամի չափով:*

*Աշխատանքները մինչեւ 1995 թ. ապրիլի 10-ը պետք է ներկայացնել հետեւյալ հասցեով. Երեւան, Խանջյան 50, շախմատի համաշխարհային օլիմպիադայի կազմկոմիտեին (հեռ. 55-49-23):*

*Համաշխարհային օլիմպիադայի կազմկոմիտե*

## «ԱՐԱՐԱՏ» ավիաձեռնարկությունը

(«Հայկական ավիաուղիներ» ավիաընկերության պետական դուստր ձեռնարկություն)

ЯК - 40 ինքնաթիռով կատարում է կանոնավոր չվերթեր Երեւանից («Էրեբունի» օդանավակայանից) **Սոչի, Ստավրոպոլ, Վոլգոգրադ, Անապա, Մախաչկալա, Վլադիկավկազ, Բաթում, Նալչիկ :**

Հեռ 486-941,484 -761

**Դուք կարող եք պատվիրել ЯК - 40, որը Ձեզ եւ Ձեր բեռները կհասցնի ԱՊՀ-ի եւ արտասահմանյան ցանկացած երկիր.**

***«ԱՐԱՐԱՏ» ավիաձեռնարկության МИ - 8 ուղղաթիռներով Դուք կարող եք իրականացնել՝***

- ուղեւորների եւ ուղեբեռների փոխադրում
- բեռների եւ փոստի փոխադրում
- բժշկական օգնություն
- բարձր լարվածության հաղորդալարերի, կապի գծերի, գազատարի, նավթամուղի, գետերի, ջրանցքների, ավտոմայրուղիների հետազոտում եւ պարեկություն
- արշավների, երկրաբանական աշխատանքների սպասարկում
- Հայաստանի սահմաններում էքսկուրսիոն թռիչքներ
- գետերի, ջրանցքների, ավտոմայրուղիների հետազոտում եւ պարեկություն
- արշավների, երկրաբանական աշխատանքների սպասարկում

*Ավիաձեռնարկության թռիչքային անձնակազմը ունի Լեռնային Ղարաբաղում ծայրահեղ իրավիճակներում աշխատելու բազմամյա փորձ, իսկ ավիասպասարկման գները զգալիորեն ցածր են շուկայականից*

**Երեւան, Արշակունյաց պ.135, օդանավակայան «Էրեբունի»**
**Հեռ՝ 486-941, 484-761 Ֆաքս՝ 448-987**

ARMENIAN AIRLINES

AJAX

# ԱՅԱՔՍ

«ԱՅԱՔՍ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԱՎԻԱՏՈՄՍԵՐ
ԱՊՀ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ
ՑԱՆԿԱՑԱԾ ԵՐԿԻՐ:

ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 43, ՀԵՌ. (8852) 536944
ԵՐԵՎԱՆ, ԿՈՄԻՏԱՍԻ Փ. 49
ՀԵՌ. (8852) 234700, 230719 ՖԱՔՍ (8852) 282951

ԹՌԻՉՔՆԵՐ՝ ԲՈԼՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արշակունյաց 2 · Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1801 Տպաքանակը՝ 7000 Ստորագրված է տպագրության՝ 20. 03. 1995 Գինը՝ 40 դրամ